


— ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԼՈՐ ՕՐ» ԹԻԻ 33 —

ԱՅՈՒ ՎԱՆՔ

Մ Ն Ա Հ Տ Ա Կ Ա Ն

(ԱՔԵՏԵՆՔԻՑ ԴԻՐԲԵՆ)



891.99

Ա-74

1021

Տպագրութիւն «ԼՈՐ ՕՐ»
Ա Ք Ի Ն Ք
1931

891.99

U-74

06 FEB 2009

6 NOV 2011



1/1

9P

ՍՕՍ ԿԱՆԻ

ԱՆԱՀՏԱԿԱՆ

(ՄԵՇԵՆԻՑ ԳԻՐՔԷՆ)

1021



Տպագր. «Նոր Օր» — Արեգի
1931

10 1 .08. 2013

1005 1004 82

4 8 0 3 0 0 0

Մ Մ Մ Մ Մ Մ Մ

(ԱՐԴԱՐԱՅ ԺԱՊԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏՆՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՐ
ՍՏՆՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

821- 2009

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԳԻՇԵՐ

ՁԱՅՆԵՐ ՍՕՍԵԱՑ ԱՆՏԱՌԷՆ

Ա.

(ԱՇՏԻՇԱՏԻ ՍՕՍԵԱՑ ԱՆՏԱՌԷՆ ՄԷՋ
ԿԻՍ ԳԻՇԵՐԷՆ ՎԵՐՋ)

Ո՛ր, ապր ինձ գծուխն ծխանի

եւ գառաւօսն ՆԱԻԱՍԱՐԳԻ

Զվազելն եզանց եւ զվարգելն եղջերուաց.

Մեք վաղ հառուաք եւ քմբկի հաւկանեաք:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Մուրը կապար՝ կը ճնշէ

Լեռը Քարկէ...:

Ու լռութիւն՝ խղունջի պէս կառչեր է

Զորի գաճաճ թուփերուն,

Մինչդեռ ծառերն, լուռ ու կա՛րկամ, աստղերուն՝

Կը պաղատին հեկեկուն:

Կարծես անէծք է իջած

Հողին վերայ, յանկարծական վշտին պէս,

Բարձր բոլոր ահաղարհուր կը դողան,

Մահուան շունչին յանդիման:

Ջայն՝ ձայնի մէջ, շեշտ չե՛շտի

Սառած իւրեւ երկու անոք ծիծեռնակ

Գիշերն՝ հսկող մեռելտէր,

Եղերամայրն՝ երկինքը ինք, կ'արտասուէր...:

Արամաղդը ահարկու

Մուրճ ի ձեռին, սալին վերայ կըրանիթ,

Կը քանդակէ հրաշքին

Պատգամը մեծ ու մեկին:

Սարէ ի սա՛ր եւ հեռո՛ւն,

Աւանդութեան մը շուրջ բոլոր՝ պարիկներ

Կ'երթեւեկեն, — կը բացուի դուռն Արուեստին՝

Այգին մէջ այգի կը բանին...:

Գիշերը է մութ,

Ոստայնացանցն իր կը հիւսէ երկրիս շուրջ,

Զի պիտ' բռնուին իր ցանցին մէջ, կը յուսա՛յ,

Խեռ ճանճին պէս՝ աստղեր համակ արծաթեայ,

Շամբուտին մէջ՝ թաթաղուն

Աշտիշատի սրբազնութեան խորհուրդէն,

Վաղուց մեռած, մարդու մը գանկը լըքուն

Սկիհ՝ կ'ըլլայ արարչագործ աստըծուն:

Ու Անահիտ՝ սրտմտած
Դանկիրն մէջ աչդ, ստինքը իր կը թաթխէ,
Եւ մայրութեան կը հռչակէ սրբութիւն
Գերադիր քան արարչական վեհութիւն:
Յայնժամ պարիկ մը պարման,
Նստած առջեւ սեմին մարմար մեհեանին,
Աստղեր՝ ուլունք կը շարէ
Ու հայ կնոջ՝ ճտնոց իբրեւ կը կախէ...:

Գրգռու, Նէմրո՛ւթ ու Սասունք:
Դիւպաղնութիւնն՝ նիզակն իր շող՝ կայծակի
Մխրճեք է կողն Տարօնի...:
Վէրքին տեղ՝
Վաղն՝ պիտի ծնի Արեւը կարչնեղ:
Ձառէթափէ զառիթա՛փ,
Կ'անցնի կրօնքն հապշտապ,
Հեթանոսի կշռոյթով, փառադրելու անդասդանն,
Համօրէն գիւղն ու աւան:
Մայրերու աչքը չըլլա՛յ
Կամուրջը պիղծ, ուրկէ անցնին ժպտադին,
Հովերը լիրբ տարփանքին,
Եւ ամրապինդ սաղմը հուժկու հերոսի
Արդանդի մէջ չըլլա՛յ
Նրման լիկած ըղեղի:
Ձի գրուած է, պիտի մընայ յաւէտ կոյս,
Ձերթ մայիսի Արշալոյս,
ՏՈՒՆԸ ՀԱՅՈՒՆ: Եւ անկողին՝ անարատ
Ձիւնը ինչպէս եւ վեհապանծ Արարատ...:
Գուպարատենչ, լոյսի կարօտ Հայաստան
Պիտի երբե՛ք, չկընա՛յ
Վտիտ մարմնով եւ ըղեղովը տըխեղծ
Հասնիլ բարձունքն յաղթութեան...:
Ողջո՛յն քեզ.

Յեղն իմ հպարտ, Հայկա՛ծին,
Վահագն ելած, կատարն Գոռոզ Քարկէին
Քեզ կը ձօնէ կախարդանքը իր ուժին...:
Նաւասարդի խթման գիշեր: Կը ճնշէ՛
Մութը՝ կապար, լեռը Քարկէ...:
Ստուերի պէս ու անխօս,
Կը հաւաքուն քրմապետը ու քուրմեր
Քրմունիներ, Անահտաձօն աղջիկներ,
Մենակեացներ ու պերճազգեստ պարիկներ,
Դեսպակէն ներս, ուր կը վառի ակութիւն մէջ
Խարոյկն՝ նրման մայրամուտի արեւներ:
Սօսեաց Անտառն կը դողայ
Հրաշքի մը վրայ,
Մինչ քրմապետն մագաղաթներ կը կարդայ:

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄԱԳԱՂԱԹ

«Հայաստանը կը հագնի Առասպելին պատմութեան,
Արեւուն դէմ կը կենայ, արեւու փառքը վերան...
Անտառներու մէջ խորունկ, պատմութիւնը կ'արթննայ
Վահանէ մը ջարդուած, իբրեւ Խորհուրդ Հնօրեայ:
Աւերակէ աւերակ, հետքերէն ալ Անցեալին,
Դարերը պերճ ու փարթամ, կուգան խոռվ ու կ'անցնին.
Մէն մի փշրանքը հողի, անոնց շունչէն Քերթողի,
Կը վերածուի յանկարծուոտ աստուածառք մասունքի...
Կը լըճանայ, ո՛վ Հրայրք, Իմաստութիւն՝ գանկին մէջ,
Բեւեռագիրն կը ծընի վանատուրէ մը անվերջ...:
Յնձա՛ ինձ հետ, Հայաստան, պա՛րէ կոյսի մը նրման,
Ձի երբ ամէն ինչ մեռնի, դուն՝ պիտ ապրիս յաւիտեան...»

ԷՐԿՐՈՐԴ ՄԱԳԱՂԱԹ

Ձը կայ երկրի ոչ մէկ խորշ, ուր ՀնՈԹԻԻՆ իբրեւ չա՛փ,
Միամտօրէն յանդգնի, չափել քու ՎԱՂՆ ու ԵՐԷԿ...:

Դուն՝ հունաւոր, բայց անհուն, ծովերէ ծով, ափէ ափ,
 Կը բանտակուի իբրեւ յուշ, կենսապատկերդ լուսնաներկ:
 Առաքինութիւնդ փառեղ, Անահիտի փառքին պէս,
 Որուն չիշխեր ոչ մէկ հեղ, Չարկամութիւնը նայել,
 Սիրտէն ծնաւ Բարութիւն, արեւածին խիղճը՝ Բեղ...:
 Շաղախիդ հետ՝ Արամազդ, իր աչքին լոյսն է խառնել...
 Ժամանակին կը կանգնիս ընդդէմ ինչպէս հուսկ սահման՝
 Դուն Աճառապետ եւ Միգրոց, դուն՝ Պատմութիւն ոսկեգիր,
 Ինչպե՞տե՞ս Եւ Դիւցազն, Գահաւանդի մը վրան
 Կը ծընրադրէ քեզ զղջմամբ, Դար իբրեւ Տէրը իր...
 Ծերութեանդ պատկառանք, կ'ընկճէ քարերն ալ անգամ,
 Մագաղաթին կը սարսին մէն մի մասնիկ ու նեարդ
 Սիրտը քեզմով Հայաստան, լացող տրդայ մը կարկամ,
 Մօրը կառչած՝ քրդանցքին, կը մուրայ Սեւն՝ իրեն պարտ...:

ԵՐՐՈՐԴ ՄԱԳԱՂԱԹ

Առախորհուրդ Հեգնութիւն, Գերադիր Հանելուկ,
 Ոտքիդ ընդքարչ կ'աւաղեն, մերկութեան պէս սրբութիւն,
 Գրիչն ամուլ կը փչի, խեցիներու պէս փխրուն...
 Դուն ես Գրիչ եւ Մասեան, Դուն մագաղաթ եւ մեղան
 Անյողնատանջ մեծ երկունք, օգոստափառ սիրարբունք,
 Չի վայելեր տեսնել քեզ, գաճաճներուն յանդիման,
 Կամ բաղդատուիլ դէմ առ դէմ, ինչպէս արծիւն ու ճնճղուկ:
 Ոչ ոք կըցաւ բացատրել ուրախութեանդ ճիշդ մեծ,
 Արսաւուքդ միշտ մընաց, մասիսադիրք հարցական,
 Աւերակներուդ մէջ եղար Տեսնող մը յոյսին յեց,
 Սուգի, արեան կատարէն՝ համբուրեց իր Աղաքան...:
 Դուն աղեղսող եւ մուրիկ, Ազատութեան հրաշքին,
 Մինչ կարծեցին քեզ ստրուկ, քննանքներու ալ ատակ,
 Բայց ըմբոստ ես ու հեղնող: Կարեկցութիւնն Օտարին՝
 Կ'ա՛րժէ արդեօք փայփայել, թէ ոչ առնել ոտքի տակ,

ՉՈՐՐՈՐԴ ՄԱԳԱՂԱԹ

Արարչութեանդ համար կաւ չկըցան գտնել բրուտներ,
 Արարատէն առին հով, մաս մ'արեւէն ու երգէն,
 Բայց, անմարմին մընացիր, իբրեւ ընծայ գերիվեր
 Արամազդը ակամայ քեզ ստեղծեց Տեսիլքէն...
 Պատմութեան սէգ առապար, վերյառնումի Առաքեալ,
 Խաղաղութեան Չիքեցի, Անմահ բանին յայտարար,
 Օր մը միտած ու սգուր, օր մը անմահ, չի՞ բաւեր,
 Հողանիւթէդ կենսատու կ'ապշին հպարտ աստուածներ:
 Յամ ու նըկուն, երբեմն նման ոտնակոխուած խոտը լերան,
 Ու մերթ՝ ինչպէս դաշտին վրայ հասակնացած ծիածան,
 Թէ ցած ըլլաս, լարճը եթէ, կը հաւատամ թէ նոյն է,
 Արարչութիւնդ անլոյծ է. այսքան քեզի կը բաւէ...:

ԽՄԻՆԻԳ

Արարչութիւնդ անլոյծ է,
 Այսքան քեզի կը բաւէ
 Հայաստան:

ՓԱՆԵՐՔ (Երկու պարմանի կոյսեր)

— Ոստանն լուսնին է,
 Կը լսուի ահա՛, հեթանոսական գոռ ձայնը դափի,
 Բոլորդ մէկ, էհէ՛,
 Ահիւ ու դողով, զղջմամբ ի խորոց, կեցէ՛ք աղօթքի...:
 = Պապերն մեր բարի,
 Պընակիտի մը վրայ գրեցին իբրեւ սրբութիւն
 Թէ պէտք է մեղի՝
 Հաղորդուիլ Հինով եւ Առասպելով հազար դարերուն:
 — Գիշերն աղօթքի,
 Նման է գանձին մէջ իր գահը հիւսած անյայտ քերթուածի,
 Որուն իմաստին,
 Չկըցան հասնիլ թեւն ու թըռիչքը ոչ մէկ հանճարի:
 = Ի զո՛ւր, արդ կուլայ
 Մատներու մէջէն եղբրամօր մը պէս՝ Գրիչն եղէգնայ...:



Ու մագաղաթը, մտքին երկունքէն յանկարծ կը դողա՛յ,
Ծունկի մը վըրայ...:

ԽՄԱՆՐԳ

Մագաղաթն կուլայ
Ծունկի մը վըրայ...:

ՓՈԽՆԻՐԳ (Երկու նորքնայ ԲՈՒՐՄԵՐ)

— Երկինքն՝ խորհուրդէն՝
Կը բռնկի ինչպէս Անտառն ծաւալուն արփույն կըրակէն,
Ու փոխիրն անոր՝
Երազին վըրայ կ'անձրեւէ, ինչպէս անէծք դարեւոր:
= Աստղերը հանուր,
Միջոցէ միջոց, իբրեւ սիրունի կուտան ջերմ համբոյր,
Կ'իջնէ յարութիւն
Ըղեղէն՝ գրչին, ու գրչէն՝ թուղթին, յետոյ՝ տողերուն:
— Զըլլա՛յ որ փորձուիք,
Կարգալ էջը մութ, անոր՝ որ դեռ չէ գրած տակաւին,
Կեանքին գոց է գիրքն,
Աստուածներ անքուն, ընդ միշտ կը հսկեն անոր գաղտնիքին:

ԽՄԱՆՐԳ

Ըղեղէն գրչին,
Ու գրչէն՝ թուղթին
Յետոյ՝ տողերուն...:

ՓՈԽՆԻՐԳ (Երկու ծեր մ. նագներ)

— Հաւատք լըծացեր,
Մարդուն սրտին խոր, ինչպէս անձրեւկաթ գունդին մէջ
Ու յանկարծ յորդէր, մարմար:
Մեհանէ մեհան, քչեր ու տարեր խեղճը բարերար...:
= Մեղքը մարդկութեան,
Ճերմակ թուղթին դէմ, ճապղած մեղանին նման է չիտալ,
Արցունքի բխմամբ,
Կը ջնջուի խալա՛ռ, ու չի մընար իսկ, բիծ մը՝ կուրծքին տակ:
— Ով դո՛ւն, արտասուէ՛,
Աստուածը ծով է: Գիշերը անհուն: Ահա՛ պատարագ:
Սարդ մը կը հիւսէ,
Մեհանին դիմաց, թեղն անմահութեան՝ իր տեսիլքին հակ...:

ԽՄԱՆՐԳ

Աստուածը ծով է,
Գիշերը անհուն,
Ահա՛ պատարագ...:

ՓՈԽՆԻՐԳ (Երկու ալիւր գուեակներ)

— Սօսեաց յաղթ անտառն
Խորունկ ներշնչում, հնոց ու Գուրայ եւ Մատուցարան,
= Սօսիներն՝ անխառն
Քով քովի կեցած հըրաշքին առջեւ կ'երգեն շարական...:
— Զոհ ու զըւարակ,
Բե՛րէք երինջներ Տարօնի երկրէն արեւով սընած,
= Արիւնն անոնց տաք,
Զըլլա՛յ որ թափի սա գետնին վըրայ մութով պըղծւած...:
— Խմեցէ՛ք, ո՛ւմպ, ո՛ւմպ,
Արեւն ցէք անյագ, մինչեւ որ սարսի, երկիրը հիմէն,
= Մինչեւ որ ընդհուպ,
Զեր ձայնէն յանկարծ, արթննան ահիւ աստուածներ քունէն:
— Սօսեաց Անտառի,
Խորհուրդը մութ է, նըման հեթանոս անգիր յուսութքի,
= Կըրակ՝ կըրակի
Մէջ պիտի ըլլայ, իմաստ ու հանգոյց՝ առանց լուծումի...:

ԽՄԱՆՐԳ

Կըրակ՝ կըրակի՛,
Իմաստ ու հանգոյց
Առանց լուծումի...:

ՓՈԽՆԻՐԳ (Հերոնոս մարգարէութիւն)

— Անտառէն Սօսեաց,
Կա՛ճի յեղակարծ, հովերգութիւնը, թեւը հովին բաց,
= Ծառի մը յենած՝
Հովին է նստեր, կը կարկըտէ լուռ, տրեխն իր մաշած...:

ԽՄԱՆՐԳ

Հովին է նստած,
Տրեխն իր մաշած...:

ՓՈԽՆԵՐԳ (ԵՐԿՈՒ ԲՐԺԻԿՆԵՐ)

— Վաղը հարսնի՛ք է,
Հիւղի մը անկիւնն պիտի տարածուի քօղը մետաքսէ,
= Տարփանքի տօն է,
Գինին պիտ' յորդի, մինչեւ որ կրքէն՝ Սէրը արտասուէ...

ԽՄՐՆԵՐԳ

Քօղը մետաքս է:
Մետաքսին ընդ դէմ
Սէրը կ'արտասուէ:
Տրեխը ծակ է...:

ՓՈԽՆԵՐԳ (ԲՐԺԻԿՆԵՐ)

— Սիրոյ տաղերգը,
Ճամբան մօլորեր, եկեր ու մտեր տրեխին քիթը:
= Ու սիրոյ փուշը,
Սրտին մէջ անոր՝ կը գրէ անհող, քօղին գաղտնիքը:

ԽՄՐՆԵՐԳ

Տրեխին քիթը:
Քօղին գաղտնի՛քը:
Փուշն է մխրճեր
Հովիւին սիրտը...:

ՓՈԽՆԵՐԳ (ԲՐԺԻԿՆԵՐ)

— Հովիւ, կա՛րկըտէ:

ԽՄՐՆԵՐԳ

Քօղը կարմիր է:

ՓՈԽՆԵՐԳ

= Տրեխը մաշած:

ԽՄՐՆԵՐԳ

Սիրտը փշոտած:

ՓՈԽՆԵՐԳ

— Կարկը՛տէ շո՛ւտով:

ԽՄՐՆԵՐԳ

Պարով ու երգով:

ՓՈԽՆԵՐԳ (ԲՐԺԻԿՆԵՐ)

= Վաղը հարսնի՛ք է:

ԽՄՐՆԵՐԳ

Տարփանքը ծո՛ւ է:

ՓՈԽՆԵՐԳ

— Եւ սակայն ինչո՞ւ...:

ԽՄՐՆԵՐԳ

Սա քարի գլխէն,
Բու մը ծեր, բարէ՛,
Հովիւն կը ծաղրէ...
Հարսանիքն՝ հեռու է:

ԿՐԻՄԱՊԵՏԸ

Ապրիլն ու մեռնիկն,
Եւ Կլնն ու ՉկԱն, երկու դռներ են իրարու նման,
Ու չարժեք տըխրիլ
Երկու դռներէն երբ որ մէկը բաց՝ միւսը գոց կը մնան:
Բլրէ մ'անմրմունջ,
Անիոյթ կը պառկի մեռելտուն հըսկայ, երազի մը վրայ,
Պատեանին իր շուրջ՝
Վաղընջուց մեռած, կրեայ մը մինչդեռ պորտխաղ կը խաղայ:
Մայրը ծընանող
Ձիւնդաց երբե՛ք, երբ իր արդանդէն տըղայ մը ծընաւ,
Իբրեւ վկայող՝
Օրրոցին երկար կամարին վըրայ, ճակտին գիրն կեցաւ:
Խօսքն է կըրօնքին,
Ծընած, չծընած, օրէնքը նոյն է, նիւթը կը փոխուի...:

ԽՄՐՆԵՐԳ

Օրէնքը նոյն է:
Մեռնիկն ու ապրիլ:
Եւ կան ու չըկան:
Օրէնքը նոյն է:

ԳՐԻՄԱՊԵՏԸ

Մինչդեռ մեր հոգին՝
Հիւլէի մը պէս աստծուն կը կառչի, ու յետոյ կ'ապրի...
Անմահ ու անհուն,
Կը մընան սակայն, Արուեսն ու Վրծին տակը Արեւին,
Որպէս անանուն,
Յաղթանակ և գեղահըրաշ երգը ըղեղին...:

ԽՄԲԵՐԳ

Արուեստն ու վրծին,
Երգը ըղեղն,
Կը մընան անմահ
Դարերուն վերայ...:

ՓՈԽԵՐԳ (կոյսեր)

— Արեւին ընծայ,
Տըւաւ Հայսթիւն, դարերէն եկած, սա Վանը չքնաղ,
Պատմութիւն ահա՛,
Ոտքի չափին հետ—հսկայ խաղքութիւն — կ'երթայ կաղ
= Ո՞վ ըսաւ քեզի, ընդ կաղ:
Կոյր չմարութիւն, ինքնամատուցմամբ յանկարծ ելլես
Հանգոյն թիթեռնի, դուն,
Թեւիդ յոգնութիւն բաղդատման բերել Անոր ոտքերուն...:
— Ես քեզի համար,
Դեղնած թուղթերէ, սա ճամբու վերայ բոյն մը շինեցի,
Եկո՛ւր մի՛ վախնար,
Ու հո՛ն քընացիր իբրեւ խոնջ ճամբորդ, ապ'ւինած խղճի...:
= Արեւին ընծայ,
Տըւաւ Հայսթիւն անցեալէն խլուած նշխար մը վայրի,
Պատմութիւն ծառայ՝
Կը լուայ լըռիկ ոտքերը Անոր, բոյրովն Նարդոսի...:

(ղաղար)

(որոտում ու աղմուկ ձորերու մէջ)

— Վան, Լէ՛ջք, Ակոփի՛:
Արեւելքն կրթնած Աստուծոյ մը հապակի շուքին,
Անդուսպ մհերի,

Դաջութիւնը խեռ, կը պատմէ բոլոր՝ եկող գացողին:
= Զգո՛յշ, չըլլայ որ,
Յանկարծ երկմտիք, մհերը ՀԱՅ է, ծընած Աստուծոյ,
Դորայրին մէջ խոր,
Երկու ձեռքերով, հրեղէն ձիուն ճակատն կը շոյ՛:

(ղաղար)

(Լեռներէն պղնձառափի եւ փանդիռի ձայն)

— Կը շոյէ ճակատն,
Կիրք՝ կիրքի վերայ, երազ երազի կը դիզէ անձայն,
Յեղն է ապերախտ՝
Մհերն ուրացաւ, անգոսնեց Անոր ուժը դիցական:
= Մի՛ դարձներ, կեցի՛ր
Ով ճակատագիր, ԶԱՐԽԸ ՖԱԼԱՖԻՆ, ա՛լ մի դարձներ,
Թող տուր որ Մհերն՝
Դուրս ելլէ վիհէն, փըշրէ թէ օտարն եւ թէ աղքը իր...:
— Ամօթ է, ամօթ,
Երէկ եւ այսօր, վաղ եւ յաւիտեան, դիւցազն անարգել,
Հաղար դարէ մօտ
Դեզ համար տանջուեր, սոսկ Ազատութեանդ յամառ երազեր:
= Եթէ, հայո՛ւթիւն,
Դեզի չէ տրուած սիրել Արեւը եւ Ազատութիւն,
Ա՛լ ի՞նչ կուլաս դուն,
Բաւ է հեծքիդ ձայն, անհանգիստ ընէ խիղճն ու մարդկու-
— Տոպրակն գնչուին թիւն:
Ուսերէդ առկախ, գնա՛ անվարան դուռը օտարին,
Բաղխել լալազին:
Ըսէ՛, չես ուզեր, երկիր մը աղաւտ, այլ՝ փշրանք հացին:
= Ելի՛ր, ով հըսկայ,
Բանտէդ խաւար շուտ, ձեռքիդ մէջ տապար, ա՛լ խրտիր
Դանձերու վերայ, չկայ:
Իջեցո՛ւր հարուած, փշրէ ըղեղներ քարերու վերայ...:

ԳՐԻՄԱՊԵՏԸ

Սիփան իր ոտքը,
Երկարեր խորունկ, լաղուարթ կապոյտով Նայիրեան ծովուն,
Ինչպէս հնձուոր մը,
Ղանոնք կը լուայ, յօնքերն իր խառնած ածուխ ամպերուն:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱ

Եղբորդի հրապարակում,
Յասմամբ, զայրոյթով, պայթեցուցեր է մոլուցքի կաթսան.
Մինչդեռ Արարատն՝
Ջանձրոյթն իր պառակ, կը փռէ յանկարծ ձիւներու վըրան...

ՄԱՐԿԱ

Արմաւիր յոգնած,
Կը ճէտ տըխուր Անցեալին հաստեղէկ կոյտերուն տակէն,
Ու Դըւին մեռած՝
Յարութիւն կ'առնէ մայր հայրենիքի Տեսիլքի մէջէն...

ՊԱՐԻԿՆԵՐ

Ու վանը ծեր է,
Առասպելն՝ անոր վիզէն հնութեան յուռութք կը կախէ,
Շամիրամ բող է,
Վանի սէգ մէջքին, ելեր տարփանքի դօտին կը կապէ...

ԽՄԱՐԳ

Հոռոմը՝ վանին՝
Դէմ կեցեր ծունկի, իբրեւ պարմանի, կրտած ներքինի,
Աղուոր Արային՝
Դարպասին առջեւ ծիծն իր կը լզէ կինը Նինոսի...

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱ

Հազար ողջոյն քեզ,
Իմ խոնջ Հայրենիք, իմ արնաթաթաւ տըխուր հայրենիք,
Աստըծու մը պէս,
Կ'իյնաս միշտ Գանեղ, բայց Գանը քուկդ է, անո՛ւշ
հայրենիք...

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱ

Դաշտն Արարատեան,
Գեղեցկութիւնն է գեղեցկութեան մէջ՝ անգլուտ ծիածան,
Կուգայ դափին ձայն,
Գահվէժ նըժոյգէն՝ սէգ Արտաւազդայ, կուրծքէն
պատմութեան:

ՄԱՐԿԱ

Անէծքը հօրն է,
Անէծքը՝ վերցո՛ւր, Երդասպան ո՛վ հայր, այսքան կը բա՛ւէ,

Հայրենիք՝ որք է,
Չայնը իր հեծքին աղանջներու տակ՝ տըխուր կը հնչէ:

ՊԱՐԻԿՆԵՐ

Այս խոր անդունդին,
Ո՞վ կապեց այսպէս, թեւերը հուժկու, ցեղի յառնումին,
Ո՞վ անոր ոտքին՝
Անցուց անուրը անխորտակելի երկաթ շղթային:

ԽՄԱՐԳ

Երեք ձիւն կան,
Երեք աստուածներ, կապուած մսուրին հին Աւանդութեան,
Իրարու նման,
Հըրաշքի ծընունդ, և նոյն շաղախով եւ գիւցաղնական:

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱ

Բուռէ Չալալին,
Հրեղէն նժոյգ, Սասունին տըւէ՛ք թուրը «կէժակ»ին,
Միւսն՝ մըհերին,
Սա՛ Արտաւազդին, արքութեան պատիւ՝ մեր Արարատին...

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱ

Դուն մի՛ հաւատար,
Եթէ քեզ ըսեն Առասպելն սուտ է, թէ՛ «կար ու չկար»,
Ըսողն այդ յիմար՝
Առանց վարանքի եւ գիւցաղնաբար, ոտքերուդ տակ ա՛ռ:

ՄԱՐԿԱ

Նայէ՛, դէպի վե՛ր,
Ծայրն Արագածին՝ կանթեղ կը վառի, Հաւատք չէ չիջեր,
Ապրիլ քանդակուեր,
Մեր կուրծքին վըրայ, երէկ եւ այսօր, դարեր ու դարեր:

ԽՄԱՐԳ

Դաշտն Արարատեան
Մարող ու վառող, մերթ նրկուն, մերթ հետո, խարոյկ
Կըրակին վըրան՝ դիւթական,
Արամաղը թափեր լոյսը ըղեղին իր արարչական...

821-2009

1021

ՍՍՀՄ
ՄԱՍԵՆԱԴԱՐԱՆ



ԳՐԱԳԵՏԸ

Վառեցէ՛ք խարոյկ .
 Սօսիներն կ'այրին Հաւատքի ջահէն .
 Ու եկէ՛ք, զո՛յգ զո՛յգ
 Հաղորդուիլ Սօսեաց անմահ կըրակէն...:
 Եւ ահա՛ սեղան,
 Զոհի մատուցման: Բերէ՛ք երինջներ:
 Հեղմամբը արեւն՝
 Մարդն Աստուած կ'ըլլայ, Աստուծմէն ալ վե՛ր:
 (Քրմօսիքներ կրակ կը վառեն)

Զին չինի վըրայ
 Կըրակն՝ Արիւնէն տղու պէս կու լայ,
 Քուրմին՝ կը դողայ
 Զեռքը իմաստուն տողի մը վըրայ...:
 Զոհեցէ՛ք արագ,
 Արիւն թող ըլլայ նըւէր մարդառաք,
 Տիւրը տետրին հակ՝
 Կը գըրէ հաշիւ, մեկանն է կըրակ...:

(Քրի՛ն կը բացան Բրմօսիքներ)

Երգելով

Հայաստան երկի՛ր,
 Արամազդ Հայուն յաւէտ թագակիր,
 Յե՛ղն իմ, մի՛ տխրիր,
 Փառքդ պիտ' յառնէ արարչութենէն իր...:

ԶՈՒԳԵՐԳ (Նորնծայ Բուրմեր)

— Սրբութիւն սրբո՛ց:
 Վառեցէ՛ք կըրակ, Վառեցէ՛ք կըրկին:
 = Հոգիին մէջ բոց՝
 Ողջոյնի կեցէ՛ք դէմ Արամազդին:
 — Մեր Աշտիշատայ
 Կախարդով գրուեր «մեհենից մատեան»,
 = Տող տողի վըրայ՝
 Ագուցուած ինչպէս Գիշերն՝ ցորեկուան:

— Ճիւղերէն մէն մի
 Սօսեաց առասպելն Անցեալէն կ'ածի,
 = Նւման շուշանի,
 Բոցեղէն աչքով ցեղին կը նայի...:
 — Հաւատքը լո՛յս է,
 Յեղն իմ հարազատ կըրակէ ծընած,
 = Կըրակը վառէ՛,
 Որ ըլլաս աստուած՝ կըրակի դիմաց...:
 — Ու տեսէ՛ք, հունա՛,
 Սօսեաց պատանին, արեամբ եղնիկին,
 = Ժեռ քարին վըրայ
 Քերթուած կը գրէ, կը ձօնէ Հայկին...:
 — Բառը բառին դէմ՝
 Երկու խոր Տեսիլք, կարմիր ու ներմակ,
 = Կարմիրին ընդ դէմ՝
 Կը հիւսէ մէկալն, անթափանց քառեակ,
 — Զեր ոտքի կոխած
 Սրբազան է վայրն, արարչին բերնէն՝
 = Եղիցին թըռած
 Ծընաւ հայ ցեղը նախասիւ պոճէն...:

ԽՄՈՆԵՐԳ

Հայ ցեղը ծընաւ
 Նախատիպ ոճէն...:

(Երբեւ սրբութիւն, կոյսեր մօխիւ կը ձօնեն)

Երամօթութիւն ու նուազ

ԶՈՒԳԵՐԳ (Ծեր մոնագներ)

— Արգիլուած է գրել,
 Պատգամն Հաւատքին: Ծննդոց ցեղին՝
 Մընաց Առասպել,
 Այն օրէն ի վեր, անդիր ու մըթին...:
 = Օ՛ն, մըտիկ ըրէ՛ք,
 Անգիր ու մըթին, երկը ստեղծման,
 Զոր գիրն ու եղեգ

Ձեզի բացատրել պիտի չը կըրնան :
 — Արամազդէ կանչեց
 Օր մը ծայրսի, առջեւ իր գահին,
 Պզտիկ ու երէց
 Բրուտներն երկրին, քաջհմուտ կաւին :
 = Ըսաւ, ստեղծենք
 Յեղը անթերի, նման աստուածի,
 Աչքին մէջ դնենք,
 Այնպէս լոյս մը որ բընաւ չմարի :
 — Գանկը թող ըլլայ,
 Արուեսի խորան, ոնի շատրուան,
 Ըղեղն դիմանայ
 Քերթովի կիրճին հսկայ ծանրութեան :
 = Բազումն երկաթի,
 Կուրծը քարաժայռ, ոտքերն պղինձի,
 Որ երբ հալածուի,
 Երկիրէ երկիր իր փառքը տանի :

ԽՄԲՆԲԳ

Ըլլայ անթերի
 Նման աստուածի . . . :

— Արտին մէջ դըրէք,
 Յոյսը մշտավառ, ու հոգւոյն մէջ ալ,
 Խորունկ թաղեցէ՛ք
 Գազպինի քաղցրով Տեսիլք՝ ծալ ի ծալ . . . :
 = Հազար բըրուտներ
 Ժողովի նստան, դարեր ու դարեր,
 Գիրկերնին դուրգեր,
 Գանկերնուն մէջ Վիշ, ճակտին տակ յոյզեր :
 — Հայը ստեղծել
 Երբեք չէր տրւած ոչ մէկ հաճնաբին,
 Ձայն կաղապարել՝
 Վեր էր աւելի ուժէն Արուեսին :
 Բրուտնա թէ ինչո՞ւ
 = Աներն բոլոր, պզտիկ եւ կամ ծեր,

Մենք պայման կ'ուզենք եօթ հեղ եօթ դարեր . . .
 — Մեզ՝ միջոց տրուի,
 Երթանք մըտածենք, վարպետներն հողի՝
 Կաւի ու ոճի
 Արուեստ պիտի՝ չափեն գիտութեամբ դուրգի :
 = Քառսուն ինն դարեր,
 Անցան չուտափոյթ, ինչպէս վայրկեաններ,
 Բայց չէր գտնուեր
 Կաւի եւ Ոճի գաղտնիքները դեռ :
 — Անցաւ եւ ահա՛,
 Երկրորդ եօթնեակը դար՝ դարի վըրայ,
 Օրերը զարհուր՝
 Մրեղի նըման, անցան Թաքթաքուր :
 = Անցաւ եւ վերջին
 Եօթնեակը երրորդ : Ամպերը իջան,
 Կատարն Մասիսին
 Կըպուր կպուրի եւ սպառնական :

ՔՐՄԱՊԵՏԸ

Ձայրացաւ յանկարծ
 Արամազդն ինչպէս երկաթ հրածարծ,
 Կանչեց իր դիմաց
 Բրուտներ բոլոր խոկումէն խոնջած :
 Գտա՞ք, ըսէ՛ք ինձ,
 Կաւը՝ որով դուք, երկնել խոստացաք,
 Յեղը՝ նըման ինձ
 Եւ ոճն Արուեստին՝ աստըծու պէս տաք :

ԶՈՒԳՆԵՐԳ (գուճակներ)

— Վարպետներն դուրգի
 Երերուն ինչպէս եղէք շամբուտի
 Եւ Արամազդին՝
 Ըսին դողալով, կաւի ու ոճի՝
 = Սահմանը ո՞ւր է,
 Մարդուն հանճարը, ծերի պէս կոյր է,
 Արուեստը բոց է,
 Բայց, երկունքն ի դուր անոր կ'աղաչէ . . . :

ԽՄԲԵՐԳ

Դուն, Արամա՛ղդ, գաղտնիքն ես կաւի,
Հուռկ սահման Ոճի, չափի Արուեստի....

ԶՈՒԳԵՐԳ (ԲԻՐԻԿԵՆԵՐ)

— Եւ Աստուածահօր
Հրամանին գերի, վարպետներ կաւին,
Նստեցան երբ որ,
Արամաղդն կուլար ընդդէմ Տեսիլին....
= Առաջնուն դուրգեր,
Ափերնին պարապ ու գանկը ծիւրած,
Իբրեւ պարտուածներ՝
Հրաշք կ'սպասեն բրուտներ սմբած:

ԳՐԱՊԵՏ

Պատգամը հնչեց,—
Առէ՛ք վարպետներ, Հողն Արարատայ,
Եւ ձեր դուրգին յեց,
Կաւը շաղուե՛ցէք շողովն լուսնկայ:
Լճին գայլատուայ,
Խորհուրդն հագցո՛ւցէք խորհուրդի վըրայ,
Լեռնէն Սենակայ
Ստեղծման ըլլան դուրգերն ձեր վըրայ:
Նայիրեան ծովէն,
Սաւառնող արծիւին՝ թեւէն բարձրութիւն,
Եւ իբ խոր բիւրէն՝
Գողցէ՛ք երկինքին անչափ խորութիւն:

ԽՄԲԵՐԳ

Եւ Առասպելից
Մարմարին վըրայ չինեցէ՛ք նոր կաւ,
Խառնուրդ անմեկին,
Եւ միասնական, զօգմամբ անզըրաւ:

ԶՈՒԳԵՐԳ (ԲԻՐԻԿԵՆԵՐ)

— Բրուտներն հազար,
Դուրգերնուն վըրայ տքնեցան երկար:

= Երեք հազար դա՛ր.

Դունի պէս անցաւ, դեռ Հայր չըկար....

ԽՄԲԵՐԳ

Երեք հազար դա՛ր:
Դեռ հայր չըկար:

ԳՐԱՊԵՏ

Հայր՝ Տեսիլք էր,
Հայրն Արամաղդի՝
Դանկին մէջ կ'ապրէր....
Մարդուն չէր տրուած
Տեսիլքն մարմնացնել
Կաւէ մը մեռած....

ԽՄԲԵՐԳ

Տեսիլք իմա է,
Երկունքն՝ ըղեղիս տանիք կը թնդէ,
Մինչ Արուեստ կ'երգէ,
Կաւը՝ աչքիս մէջ, Ոնր կը ծաղրէ....

(Համերգ՝ բնկերակցութեամբ նուագի)

Բրուտներ գացին:
Դուրգին երգն մեռաւ այն օրէն ասդին.
Անոնց ետեւէն՝
Հայր երկնեցաւ Հրաւիրն մէջէն....

(Գիրկընցիւսառնում եւ համբոյր ամէն կողմի):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՂԵՐ

ՀԱՄԱՐ ԴՐԱՇԽԻ ՀԱՄԱՐ

Բ.

(ՎԱՀԻՎԵԶԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ)

Թառ ու տաւիղ, քշոց ու ծնծղայ,
Ձոհարանին պատէն կախ՝
Չայնաշարին կը նային...:
Յանկարծ կուլայ կտնտոց՝
Իր չգիտցած խազին վրայ:
Ու երգն ի դո՛ւր, լարէ ի լար կուտայ խոյս,
Ու չգտած սիրտերու մէջ ապաստան,
Որբերու պէս, թուփերու տակ կը սմքի...:
Օ՛ն, փրկեցէք պարտութիւնը Արուեստին,
Ան՝ մեզի ծանր կը կշռէ...:
Մութին հետ,
Կը ճնշէ լեռը Քարկէ...:
Կը սորսորի լռութիւն՝
Նրկինքէն՝
Նրման վազքին, ժարգերու մէջ դողդողուն
Առուակին,
Գիշերն կախարդ: Ծամերը սև իր դանկին
Պատուհանէն ներս կ'առկախին,
Յատակին վրայ կը ջրվէժեն դէպի ցած,
Կիրքերու պէս մօլեղւած,
Վահէվեհան բազնետունն՝
Ծառերուն մէջ կը շողա՛յ,
Իր սանդուխէն կը բարձրանան ոգիներ,
Մեհեանէն ներս, կ'ըլլան աղուոր առասպել:
Գիշերն է սա, հսկումին,
Քուրմ մը դողդոջ կը վառէ
Աշտանակներ տասնըհինգ...:
Խորհրդատետրն ոսկեթերթ Անահտին,
Կ'արևորի լոյսէն այդ,
Կտցած երկու աղաւնիէն գեղակերտ:
Բազնետան մէջ, ուխտաւորներ ծնրաղի՛ր,

Կ'աղօթեն,

Բրմուհիներ ու քուրմեր՝

Կը հաղորդուին Հաւատքէն,

Լինչդեռ կոյսեր քաղցր ձայնով կը կարդան

Սաղմոսներ.

Առաջին կոյսն՝ ձեռքը բռնած սրսկաման

Վարդեջուրով, կը սրսկէ զայն Անահտի

Արձանին վրայ մարմարէ,

Մէջքի գօտին Մարգարտայեռ կը քակէ

Կոյսը երկրորդ, իբրեւ ձօն՝

Ձայն կը նետէ աստուածոնհուն ծունկին վրայ,

Ու կուլայ:

Իսկ երրորդը, ծամերու հիւսկն, շողի պէս՝

Ուսէն վա՛ր.

Կը թափէ յորդ, զերթ ալիքը սիրոյ,

Անահիտի ոտքը անով կը լուայ....:

Ա. ԿՈՅՍ

Մեղա՛յ,

Բ. ԿՈՅՍ

Մեղա՛յ,

Գ. ԿՈՅՍ

Մեղա՛յ....:

ՔՐՄԱՊԵՏ

Ո՛վ իմաստութիւն, Անթերի,

Դուն ես սկիզբ եւ վերջակէտը բանին

Դուն մայրութիւն անյեղլի

Անդուգական արարչամբ և Հայածին:

Աստուածուհի՛, կոյս ի կուսան, Ոսկեհատ,

Հանճարն քեզմով Հայը ծընաւ. և ցեղն իմ՝

Պատմութիւն մը՝ պատմութեան մէջ ապստամբ,

Տիգրանին ձայն՝ կը ծեծէ դուռն Հոռմին....:

Արտաշէսէն, Կովկասն եղաւ արեան լի՛ճ,

Վահագն ըրաւ վիշապաղունքն ցիր ու ցան....

Ո՛չ Շամիրամ, ոչ Սաթենիկ, զոյգ աղիճ,

Կրցան մարեւ պատուոյ կանթեղը Հայկեան:

Ա. ԿՈՅՍ

Մա՛յր ես, մա՛յր ես

Ոսկեգէս,

Բ. ԿՈՅՍ

Դուն ծընար մեզ

Նրման քեզ....:

Գ. ԿՈՅՍ

Անճառ ինչպէ՛ս,

Միտքը վէս....:

ՄԱՆԱԶ ՄԷ

Դանկերու մէջ կ'արշալոյսուի Ստեղծում,

Ըղեղը՝ Ոճ, Գրիչը՝ Ձեւ կը ծնի....:

ՔՐՄԱՊԵՏ

Մագաղաթին կը դողայ թելը մէն մի....

Նրկամբ յանկարծ Աբուհամի....:

ՄԱՆԱԶ ՄԷ

Դիրքն ու Մատեան ըղեղներու մէջ կ'ըլլան

Յուսթի հրաշք, յղացման....

ՔՐՄԱՊԵՏ

Սաղմնահատիկ բառ ու տառին, գիծէ գիծ

Կեանքը կ'ընեն անթախիծ:

ՄԱՆԱԶ ՄԷ

Սա՛ւստրա՛կէս: Ու մեկալը՝ միջա՛կէս:

ՔՐՄԱՊԵՏ

Բայց կը փակէ, դուռն խորհուրդին՝ վերջակէս....:

ՄԱՆԱԶ ՄԷ

Բութը ինչպէս կրքոտ տղայ, վեր նստեր,

Կը դիտէ փախն կախման զարհուր կէտերու....:

ԳՐԱԳԻՏ

Մինչ Հարցականն, ծուռ կը նայի խմաստին
ինչպէս արդարը մեղքին...:

ՄԱՆԱԶ ՄԷ

Խեղճիւնի ոտքերու պէս, սա երկճեղ
Չակերտ մինչ կը ճգէ՝
«Արուեստի տողն՝ ապուշներուն դէմ դոյ է...»:

Ա. ԿՈՅՍ

Անահիտ:

Բ. ԿՈՅՍ

Անահիտ:

Գ. ԿՈՅՍ

Անահիտ:

ԳՐԱԳԻՏԸ

Յողը ինչպէս արտին վերայ կը հեղու:
Արարչադուր այգուն,
Այնպէս գրին թուղթին վերայ կը լենու
Տարափը խեռ, մտքերուն...:

ԽՄԲԵՐԳ

Պատկերն ընդդէմ պատկերի
Գրին՝ լոյսին կը նայի...:

ԳՐԱԳԻՏ

Մենեանգիրքը, ու մեռելոց մեծ մատեան,
Անոնց մէջէն, գիրքը յամառ, ստեղծման՝

ԽՄԲԵՐԳ

Գրակալին հասակնացած բարձունքէն
Կը դիտէ մեղ, ինչպէս արքայ մ'իր գահէն...:

Ա. ԿՈՅՍ

Ոսկեծղի:

Բ. ԿՈՅՍ

Աստուածո՛ւհի:

Գ. ԿՈՅՍ

Հայաշխարհի:

ԽՄԲԵՐԳ

Գիրքն ու բագին
Համազօր են,
Աչքերուն դէմ՝
Արամազդին...:

ԳՐԱԳԻՏ

Երկիւղն՝ արջասպ, կ'այրէ մեղ,
Սիրտը սմբած քոչուն մ'է...:
Մեղքը առիւծ մը ինչպէ՛ս,
Իր ժանիքները կը սըրէ

ԽՄԲԵՐԳ

Կամք՝ կը փլչի շառաւմամբ
Տունի մը պէս հինաւուրց...:

ԼՈՒՍԵՈՑ ՄԷ

Մեղա՛յ, մեղա՛յ:

Լուսնոտ մ'եկած Շատխու կարկառ լեռներէն
— Որոնք ընդ միշտ, փոթորկին դէմ ամենի,
Կը փորձեն նետն, իրենց ուժին գերակայ,
Հանդիսութեամբ վահագնի. —
Կը բերէ ոտն, Աստուածամայր Անահիտն,
Չարահամբաւ ախտը զաղիր, բանտարկած՝
Վանդակին մէջ իր մըսին...:

ԼՈՒՍԵՈՑ

Մեղա՛յ, մեղա՛յ

Անոր պողպատ ողնայարին ընդ մէջէն
Եւ արիւնին՝ կը լողայ
Մեղքը. կտակ՝ հնօրիայ...:
Կը գալարուի գեղամարմին լեռնականն
Կսկիծէն խոր իր ախտին:

Նման ահուի, տակ մընացած ձեր օձին...:
 Քուրմեր բոլոր, աղօթաւորներ եւ ամբողջ
 կը զարհուրին սա լուսնոտի «մեղայ»էն,
 Հաւատքին սոսկ կ'ապաստանին տողն ի տող
 Վառեակի պէս՝ մայրերնուն
 Թեւերուն տակ կ'ըկըտուն,
 Վերէն թռչող արծուին նոյն իսկ ստուերէն...:

ԼՈՒՍՆՈՏ

Մեղայ, մեղայ,

Ձայնն իր հնչեղ կը պաղատի, կը ցաւի՝
 Ընդ դէմ անցայտ հրաշքին...:
 Մինչ շրթունքն իր զղջացողի կը դպնի՝
 Անահիտի մարմարին...:
 Բագնետան մէջ, աստուածութիւն կզգենու
 Առասպելը տաս տարու,
 Մեղքը անոր, ճիւղէն ծիւրած կը կախէ
 Անէծքն՝ եկած պապերէ...:
 Յորդ լոյսերու, խուրճերն դեղին, կատարէն
 Արեւափայլ տաճարին,
 Մերթ կը մարին, մերթ կը բոցնան, կ'անցրեւեն
 Յաւերժութիւնն կըրակին:

ԼՈՒՍՆՈՏ

Մեղայ,....:

Ա. ԿՈՅՍ

Դո՛ւն Չօրութիւն, մեղքի գտիչ:
 Եւ հաստիչ:

Բ. ԿՈՅՍ

Դո՛ւն Սիրտերու Աթոռակալ:
 Գահակալ:

Գ. ԿՈՅՍ

Ամենագէտ Աստուածո՛ւհի,
 Մեղայ քեզի...:

ԴՐՄԱՊԵՏ

Ու փառք քեզի, այնքան անգամ, յաւիտեան,
 Որքան լոյսի կաթիլներ
 Աստղերու մէջ, կամ արեւու մէջ չըկան...:
 Եւ փառք քեզի այնքան անգամ, Անա՛հիտ,
 Որքան միլիոն վայրկեաններ
 Չըկան գալիք ու անցած դարերու մէջ, Անահի՛տ:

Ա. ԿՈՅՍ

Կեցուցի՛չ մայր, գթա՛, գթա՛,
 Մութը գթիւիդ կը լլկէ մեզ
 Չարախանձ դեւ մը ինչպէս...:

Բ. ԿՈՅՍ

Մենք մեղուցեալ ենք մեղօ՛ք,
 Մեղքը խայթող օձ մըն է
 Մարմինը մեր կը տանջէ...:

Գ. ԿՈՅՍ

Խորազննին, Անահի՛տ,
 Դթա՛, գթա՛, դուն մեզի,
 Դուն մեր տէրն ես, մենք՝ գերի...:

ԼՈՒՍՆՈՏ

Մեղայ, մեղայ,

Կը փաթըթուի լուսնոտն յանկարծ, լեռնցի,
 Քրժապետի քղանցքին,
 Ինչպէս ճողած, բաղեղն առտու բարտիլին՝
 Յօղապարու հասակին:
 Դէմքը դեղնած, աչքերը թաց, կը հեւայ,
 Մսին մէջէն՝ զղջումն ու ցաւ կուգան հեռ,
 Ճակտին վրայ, մեղքը պառկած, կ'ուրա՛նայ
 Ահազարհուր չարիքն իր...:

Ա. ԿՈՑՍ

Կոյս ի լուսոյ,
Անմահական...:

Բ. ԿՈՑՍ

Անսպառ ալ
Զգաստութեան...:

Գ. ԿՈՑՍ

Երդն՝ Անահիտ
Լարն՝ Հայաստան...:

Մեղաւորին չոքե՛ր է,
Սրտին վրայ՝
Անէծքին աղան, շաղուած ցեխով պապերէ...:
Դողդըղալով կը կանգնի
Ախտաւորն,
Կը համբուրէ խորհրդատետրը ոսկի...:
Լուսնոտութիւնն՝ կարկուտին
Աւերն ու անբոյժ,
Անոր շուրջն՝ Զուռն ու Ոճը Արուեստին
Լքուած նըման երազին...
Անկէ՛ ծաղկի թերթերն փափուկ, մետաքսէ
Կը թափին,
Գետնին վըրայ՝ գթութիւն.
Կը ծընին՝
Ոճիւրը և հեղնութիւն...
Ու վա՛յ քեզի, եթէ յանկարծ, համբաւիդ,
Զօդուի ամօթն՝ լուսնոտին,
Սէրըդ չիրիմ ըրէ՛ յայնժամ, եւ հողինդ՝
Լեցո՛ւր վիշտով աղտաղտին...:
Զըկայ դարման, ո՛չ ալ միջոց, արիւնի
Մէջ կը ծլի, շաքիլ յայրատ ամօթի,
Լոկ իբրեւ յուշ, չրթունքին ծայրն կը մնայ
Նըման տարտամ աղօթքի,
Զարտասանուած խօս մը միայն «ես մեղա՛յ»,

Ա. ԿՈՑՍ

Դո՛ւն հրաշքի, տաճարներուն լուսարար
Հրաշատեսիլ
Գթոտ մա՛յր:

Բ. ԿՈՑՍ

Ըղեղդ քու ծընաւ երկու առասպել
Դարէ ի դար
Անընտել...:

Գ. ԿՈՑՍ

Յանուն քեզի, յանուն փառքիդ, հրաշքիդ
Դըթայ մեզի
Անահիտ...:

ԼՈՒՍՆՈՑ

Ինծի՛, ինծի՛,

Ա. ԿՈՑՍ

Կը նստիս կառքն, որուն լծուած Աստղեր վառ
Իբրեւ հուժկու
Երիվար...:

Բ. ԿՈՑՍ

Ամէն գիշեր, բարեխօսել կ'երթաս դուն
Մեղքին համար
Ամէնուն:

Գ. ԿՈՑՍ

Դուն կայիր երբ, երկրիս վրայ չկար բնաւ
Ոչ մէկ հիւլէ
Եւ ոչ կաւ...:

Ա. ԿՈՑՍ

Լոկ անունըդ աստուածի
Կը յածէր
Լոյսի մէջէն Արուեստի
Իբրեւ տէր...:

Բ. ԿՈՅՍ

Մընար անդոյդ քերթողէն

Որ ըլլաս

Տաղը երբե՛ք չը գրուած

Քերթողէ...:

Գ. ԿՈՅՍ

Ոճն՝ անմատոյց

Աստեղատուն .

Դուն՝ եղար հանդոյց

Եւ մթութիւն...:

Ա. ԿՈՅՍ

Չափի ու Չեւի

Քերթողագիրք

Տողերէդ կ'անցնի

Հանճարին կիրք...:

Բ. ԿՈՅՍ

Էջդ՝ միշտ ամրափակ

Աչքին ընդ դէմ,

Գիրն ու բառ զուգեակ .

Գիտութեան վէմ...:

Գ. ԿՈՅՍ

Դուն բանալի

Եւ գաղտնիք .

Որհնուրդ բանի

Եւ երկինք...:

ԼՈՒՍՆՈՏ

Ինծի՛, ինծի՛:

Չարհուրա՛նք,

Մեծ բագնետունն, կեռիք կապուած տղու պէ՛ս .

Ինքն իր վըրայ կը սմբի՛,

Ու մարդէ մարդ, ձիւնի պաղով կը սահի

Ալիքը յորդ հաւատքի:

Ձի յեղակարծ աշտանակները պղնձիայ

Կ'ընդելուզուին զեղին լոյսովն մոմերու,

Կ'իջնան ու վեր կը բարձրանան գլուխներ

Երկրպագու կըրօնքին,

Բարտերու պէս՝ որոնց կատարն կը ծեծուի

Մըրրիկներէ զայրագին...:

Խունկ ու բուրվա՛ռ . Սիրտերու լուռ անդաստան

Մարդն ու աստուած պիտի խօսին իրարու:

Լռութի՛ւն:

Մարդն՝ ինքն իրմով եւ իրեն մէջ կը հա՛լի,

Գաղտնիքներու պէս երկու:

Ճանձի թեւին, ձայնը նոյն իսկ պիտ' կարծուէր

Ահեղմըռունջ որստու՛մ,

Եւ կամ արգանդն երկրին պատուած հրաբուխ:

Անահիտի արձանին քարն՝ կը քրտնի

Ինչպէս ճակատն մահամերձիկ մանուկի:

Ճը՛ռ, յետոյ՝

Ծիսիլին վրայ դուռը հըսկայ կը Բացուի,

Ու դուրս կ'ելլէ քրմունին,

Ձեռքը բռնած հրաշատուփը ոսկի

Եւ ուսին՝

Նետած լայնչի եւ ծաղկահիւս քղամիդ,

Կը քալէ ծա՛նր, դաշտէ դարձող գոմէշին

Անպատմելի խոնջէնքով,

Ու կ'երթայ շեշտ քրմապետին ծերունի,

Որ իր գահին վըրայ նստած կ'աղօթէ,

Գլուխն առած ձեռքին մէջ,

Վարդ մը ձերմակ՝ լիաբաց,

Ուր հաւատքի ուռենին,

Կ'զգենու բիւր առասպել,

Սնանելով հանճարէն...:

Մինչ բառերը, յորդահոսուն կ'առուակին

Ծնօտէն վար՝ իրրեւ հեղեղ, իրրեւ երգ

Լեցնելով պերճ բազմեություն . . . :

ՓՈՒՆԵՐԳ (կոյսեր)

- Արամազդի արարչական գանկին խոր
Անդադար ,
- = Երկերը մեր իբրեւ Տեսիլք , իբրեւ Երկ
Կը ծրվար :
- Տարբը չըկար , կաւը իսպառ անծանօթ
Գոյսնիւթ :
- = Եւ «Եղիցին» ըղիցին մէջ բիբէ գուրկ
Մայրամուտ . . . :
- Բարձր էր դարձեալ Մասիսն ձիւնոտ , իր կատարն
Կը մխէր ,
- = Հայ աստուծոյ մըտածման մէջ , իբր ցնորք
Գերիվեր :
- Ստեղծմած ցաւն՝ գանկին մէջէն կը կոտտար
Աստուածին :
- = Չարախընդաց փուշը ինչպէս միտէն ներս
Մեր ոտքին . . . :
- Ու Արագած , դեռ պարմանի լեռնանոյշ ,
Քօղն հագած ,
- = Կը հիւսէր ցանցն , Առասպելին իբրեւ յոյշ
Կիսառկայծ . . . :
- Աւանդական կանթեղն գլխուն կը վառէր ,
Աստղի պէս ,
- = Ոչ ոք գիտէր , թէ ձէթը ո՛վ կը լեցնէր ,
Վերջա՛պէս . . . :
- Ծովն Նա՛յիրի , խրախճանքի մեծ դահլիճ ,
Հայ Ոգին՝
- = Կը դիեցնէր ուր իբրեւ մայր՝ իր կաթով ,
Ճիտն Հայկին :
- Գեղամայ լիճն պարիկներու ննջարան ,
Ուր մէն մի ,
- = Յաւերժահարս ունէր պալատ ծաղկին մէջ՝
Քրքումի . . . :

- Նազիկն՝ յուռութք , Արչակն՝ ամու , Նարդոսի
Ծաղկաստան ,
- = Գայլատուայ լիճն՝ ընծայարան հաւատքի
Մոգական :
- Դուն եղար կաւ , Ո՛վ Արամազդ , արարիչ
Եւ բըրուտ ,
- = Աստուածաշունչ դուրգըդ հսկայ , Հայուն տուաւ
Իր կշռոյթ . . . :

Հաւատաւոր բազմութեան ,
Սիրտը վախէն , ինչպէս ճնճղուկը ցուրտէն
Քիււի մը տակ սահմըռտըկած ու սմքուն ,
Կ'ուզէ թռչիլ վանդակէն դուրս , ու երթա՛լ
Վայր մը անքայլ , ուր չղգայ ,
Հաւատքին բիրտ ծանրութիւն . . . :
Բայց , գոց է դուն , ամրափա՛կ
Պատերն իր միս ու ոսկոր ,
Ու բանտուած սիրտն չգտած ելք փախուստի ,
Կը ծընրադրէ Արամազդին դէմ դարձեալ . . . :
Հովը ցասկոտ կրօնքին ,
Գլուխներէն ապտակը իր շահելով
Արքայի մը պէս կ'անցնի ,
Գրակարգաց կոյսերն ինչպէ՛ր հինցած մա՛ղք ,
Մագաղաթին առջեւ յանկարծ կ'աղօտնան .
Ու լուսնուտին կը ճենճերի աչքին մէջ՝
Յուլը պարտուած ու գերի :
Կը մարի լոյսն , պահն է զղջման , բազմեությունն՝
Գիշերին մէջ՝ մեղանի պէս կը հալի . . . :

ՔՐՄԱՊԵՏ

Ո՛վ Անահիտ , փարա՛տէ մութն գիշերուան ,
Մեղքին գիշերն կապարագոյն , աւելի
Ծանր է մեզի քան սարսափը մահուան :

ՔՐՄՈՒՀԻՆ

Մեր բերաններո՞ւ բա՛ր Են ,
Ճնճղուկներու ձագին պէ՛ս ,
Հրաշքէ՞դ գութ կը հայցեն :

ԺՈՂՈՎՈՒՐԳ

Վանէ՛ խաւարն աստուածունի,

ԼՈՒՍՆՈՑ

Գըթա՛ ինծի, գըթա ինծի,

ՔՐՄԱՊԵՏ

Մեղքը մեր սէջ մեղքը մեր շուրջ...,

ԼՈՒՍՆՈՑ

Ես եմ մեղքին տըխուր կամուրջ...,

ԺՈՂՈՎՈՒՐԳ

Մեղքը մեզ հետ յամառօրէն կ'ընթանա՛յ,
Մեր հասակէն ջրածնուող շուքին պէ՛ս,
Գթա՛ մեզ...:

Ա. ԿՈՅՍ

Մայր զգաստութեան,

Բ. ԿՈՅՍ

Կեցուցի՛չ ազգիս,

Գ. ԿՈՅՍ

Աղբիւր գթութեան,

Ժամերգութիւն կը դադրի:

Լուսնոտին հեւքը մինակ,

Թեւը կոտրած արտոյտին պէս,

Անահիտի արձանին ոտք կը պա՛հուի,

Դադտագողի՛

Սպասելով հորաշքին...:

Կանչն առաջին, լերան գոռոզ խօսնակին,

Աղջամուղջին պատուելով ծովը, կը սուրա՛յ

Քաղքի ամբոխն, երկուքի՛

Բաժնող կատղած խենթին պէս...:

Ու կ'իյնայ ներս, երինասեայ դռնէն մեծ,

Եւ կ'երթա՛յ ողջագուրուիլ

Քրմապետին մօրուքին...:

ՔՐՄԱՊԵՏ

Լո՛յս, Լո՛յս,

Դարձեալ Լո՛յս:

ՔՐՄԱՊԵՏ

Իմաստութիւնդ՝ ծաղիկ բացած
Շուշան է,

ԼՈՒՍՆՈՑ

Ո՛վ Անահիտ, կուրծքիս վերայ
Ալ ծաղկէ...:

Ա. ԿՈՅՍ

Մարգին կանանչն՝ մենք ենք, իսկ դուն,
Տիրունի՛,
Յօղն՝ կենսատու մեր ծիլերուն,
Պարմանի:

Բ. ԿՈՅՍ

Մենք՝ հողանիւթ, կաւէ անօթ
Ու խեցի՛,

Դուն, Անահի՛տ, մարմին ունիս
Աստուածի...:

Գ. ԿՈՅՍ

Դարնան կուրծքէն՝ ծընած գարո՛ւն,
Անահի՛տ,

Դուն ես գարուն յաւերժանուն,
Անահի՛տ...:

ԼՈՒՍՆՈՑ

Մարմինս մեղքի,

Ու անէծքի,

Բընակարա՛ն

Նիւթական...:

Քուրվառն ձեռքին կը խնկարկեն աղջիկներ,
Մեհնատունն կը բռնէ մուխը խունկի,
Քրմապետի մօրուքը ձիւն՝ կը սո՛ւզի,

Մուխին մէջ,
 Ծովուն յատակ ընկնող
 Թիին պէս...:
 Քուրմ մը յայնժամ, ներս կը բերէ արիւնն տաք,
 Զըւարակին մորթըող,
 Որուն արիւնն, մաս մը կ'ըլլայ մեղե՛ղի,
 Մաս մը աղօթք, մաս մըն ա՛լ
 Յոյս կեանքի:

ԳՐԱԳԵՏ

Եյլի՛ր, ախտաւոր ու խմէ՛...:

Լուսնոս

Մեղա՛յ, մեղա՛յ (չնչատ ու ծանր)
 Լուսնոտն ահիւ, կը մօտեցնէ շրթունքն իր
 Զոհի արեան բաժակին:
 Մեղա՛յ, մեղա՛յ.
 Ամբոխն տըղու պէս կուլայ,
 Կը հնչէ դափն ու փանդիւ,
 Մինչ ծնծղաներ կը թրթռան
 Տերեւներու պէս աշնան. .:

Ա. Կ. յս

Գթութիւն,

Բ. Կոյս

Գթութիւն,

Գ. Կոյս

Գթութիւն,

Փողովո՛ւ րդր (Բիսիտգազ)

Գթութիւն

Անահի՛տ,

Գթութիւն:

ԳՐԱԳԵՏ

Ախտաւո՛ր,

Կը հաւատա՞ս Անահիտին,

Գերհօր՝

Եւ անվրէպ հըրաշքին:

Լուսնոս

Կը հաւատամ ամէն ժամ,

Ուր որ ես եմ ու ըլլամ:

ԳՐԱԳԵՏ

Փրկարար մա՛յր,

Փողովուրդ

Անահի՛տ...:

Լուսնոս

Մեղա՛յ,

ԳՐԱԳԵՏ

Հաւատքի վէժ,

Փողովուրդ

Անահիտ,

Լուսնոս

Մեղա՛յ,

ԳՐԱԳԵՏ

Կեցուցիչ,

Փողովուրդ

Եւ փրկիչ,

ԳՐԱԳԵՏ

Եւ հաստիչ,

Լուսնոս

Գըթա՛, գըթա՛ առ՛ իս

Անահի՛տ,

Օգնէ ախտաւորիս

Անահիտ:

Ձայնը՝ հենքին մէջ կը կասի
 Մազոգն ինչպէս ժանգոտած,
 Կը խորլտայ հէք լուսնոտի կոկորդէն
 Ու շուրթին ծայրը կ'ըլլայ
 Անօրինակ պաղատանք:
 Հաւատաւոր գլուխներ
 Կը խոնարհին հեղ մըն ալ,
 Սրբազնութեան առջեւ հաստոյր կրօնքին:
 Արամազդի սարսափն կ'անցնի սիրտէ սի'րտ
 Յար եւ նըման դեկտեմբերի ցուրտ հովին...:
 Մեծ քրմապետն, գլուխն դըրած «չաթալ» թագ,
 Ձեռքը բռնած աղաւնակերպ աւազան,
 Բազուկներուն կը թօթուէ
 Ոսկեճամուկ բազպաններ,
 Ու լայն կուրծքէն կ'առկախի
 Պերճ քարերով փորուարն,
 Կընդառաջէ Տաճարն ոսկի՝ Անահտին.
 Հանդիսական քալուածքով,
 Վեր կը բռնեն փարթամ ծոնդով շուրջաօրն
 Ահեղափառ քղանցքներ՝
 Վեշտասնամեայ աղջիկներ:
 Տողանցում,
 Բրմուհի մը, ուսին լայնչի քղամիդ,
 Տուփն հրաշքին ձեռքին մէջ:
 Բրմուհիներ, ու քրմիկներ, գուշակողն,
 Յետոյ կուգան ջահակալներ տասնընչինգ,
 Հայաստանի նահանգներու համբանքով,
 Ամէնէն բարձրն, ու հնաբոյրն, ջահն իսկ է
 Արարատեան Աշխարհին,
 Մէն մի ծոպէն՝ կը փայլի
 Աստղ մը, նշան երէցութեան ու փառքի...
 Անոնց հետքէն, ուսին վերայ կրելով
 Անահիտի կիսանդրին,
 — Պատգարակի մը վրայ, —
 Նազելաճեմ կը քալեն
 Անահտաձօն գեղամարմին աղջիկներ,

Ա. Կոյս

Օրհնէ՛ մեզ,

Բ. Կոյս

Օրհնէ՛ մեզ,

Գ. Կոյս

Մե՛զ, մե՛զ.

Խոսմ'ք (եղանակաւոր)

Մօր մը պէ՛ս:

Գրմապէս

Քիչ կը կանչենք, գութ կը մուրանք անձկագին
 Ազատէ մեզ գերութենէն խաւարին,

Փողովուրդ

Էւ մեղքի՛ն.

Լ. Կոմոս

Մե՛ղքին (հեկեկալով)

Գրմապէս

Մեղի եկո՛ւր քեզ կ'սպասենք Անահիտ,
 Աստուածային շունչէդ կ'ուզենք հազորդութիւն.

Խոսմ'ք (եղանակաւոր)

Աղը ինչպէս, ովկիանոսի ջուրին հետ,
 Էութեանդ մէջ կ'ուզենք իսպա՛ռ խառնըւիլ...:

Պատգարակիւրներ

Բովանդակողդ Անբովանդակ, Տիրուհի,
 Մենք՝ հիւլէ ենք, աստուածութիւնդ չափ չունի...:

Խոսմ'ք (եղանակաւոր)

Մորթը ի՛նչ է, կեանքը ի՛նչ է, միսը ի՛նչ,
 Երբ սրտին մէջ կըրօնքն չ'ընեն ելեւէջ...:

Լ. Կոմոս

Մորթը ի՛նչ է, միսը ի՛նչ,
 Ոչնչութիւն և ոչինչ...:

Քրմապետ

Իմացական Անեղրութիւն
Դերանուն...:

Քրմապետ

Դուն ես մեր տէր ու գահակալ,

Քրմապետ

Մենք՝ մարդի ծիւ, մենք դաշտի խոտ՝
Եւ նրկուն,

Քրմապետ

Ոտքիդ փուշին ամէնքս ա՛լ...:

Քրմապետ

Յիշէ՛ մեզ,

Քրմապետ

Մե՛զ, մե՛զ,

Քրմապետ

Մօր մը պէ՛ս

Քրմապետ

Մօր մը պէ՛ս...:

Ուսերուն վրայ պատգառակն
Նըման է
Լոյսի ցունցին եւ բըռնկած արեւին,
Կը ջրվիժի. լոյսը անոր, դետնին վրայ
Մաղթանքներու պէս մաքուր:
Երեք կոյսեր կը քալեն,
Համակ խորհուրդ ու զիւթանք:
Աստուածներու աչքածառին ցուցանակն՝
Բռնած է ան, որ ունի
Ծամեր յորդուն ու գանգուր,
Երկրորդը լուռ կը կրէ
Դրօշը սուրբ, աւանդական կրօնքին,

Մինչ երրորդը՝ եօթնախորհուրդ աշտանակն,
Եօթը ջահով, աստուածներու եօթ թիւով:
Կանչը կրկին, լերան հպարտ խօսնակին,
Այդ պահուն,
Անտառը խիտ գիշերը մութ ձեղքելէն,
Կուգայ մտնել բազնետուն:

Քրմապետ

Ձեր յիշատակն, փառքերը ձեր Աստըծու
Քաղցր է ինչպէս ստինքին կաթը՝ մայրերու
Մեր ըղեղին մէջ կը կաթի լոյսը՝ ձեր,
Որպէս տաղանդ, որպէս Արուեստ մը անմեռ...:
Մենք զոհեցինք, Տարօնի յոյր երինջներ,
Արիւնն անոնց՝ սեմին վըրայ բորնկեր՝
Վարդերու պէս, ուր՝ փառքին դէմ ախար սեւ
Կուրծքը ծեծէ ու կ'արտասուէ հեւ ի հեւ:
Ջոհն երինջին, սրբազնութիւն կրօնքի՛,
Պէտք է չնչեւ ձենձերահատը մըսի,
Ամէն առտու, մեծ ու պզտիկ, եւ բոլոր,
Խղճի ճիշէն հոգին զարթնի մինչեւ որ...:

Խուժը (կղանկաւ օր)

Փրկէ՛ դուն մեզ,

Կ'աղերսենք քեզ:

Քրմապետ

Մի՛ մոռնար դիս,

Լուսնոտին բառն՝ աղեղէն պիրկ, արձակուած
Նետին պէս,
Սիրտեւէ սիրտ, մինչեւ խորունկը խղճի
Կը խրի...:
Ու մինչ կ'անցնի թափօրը յամր ու դանդաղ,
Ախտաւորն՝
Պատգառակին տակէն ինչպէս հետս կ'իյն
Կը բանի՝

Աղաչանքով ու արցունքով, ցաւն անոր՝
 Հոգիին մէջ, թամբեր իր ձին կ'արշաւէ
 Հովի պէս:
 Աչքերուն մէջ արփուոյն լոյսի չկայ բիծ,
 Բիրբերն՝ մութին սառերուն մէջ կը մըսին....:

Լուսնու

Մի՛ մոռնար զիս,

Չայն մը

Աւօ՛թեցէք անոր համար, անխըտիր,
 Հոգի մ'փրկել լաւ է քան
 Հաղար տաճար շինելէն....:

Աքլորին,
 Կանչը երրորդ, հեռատանէն կ'արթնցնէ
 Պարիկներ,
 Որոնք պիտի երթան բերել խումբ ի խումբ
 Արեւ-մանուկն՝ օրօրոցէն իր հուրէ:
 Արեւ, Արեւ, եկո՛ւր մեզ,
 — Ախտաւորին սրբապղծուած միտին մէջ
 Անէծքն՝ խնջոյք կը սարքէ....:
 Արեւ, Արեւ:
 Թափօրն յանկարծ, կ'առնէ կանգ:
 Արեւ, Արեւ:
 Հուսամուտէն կը նայի
 Պայծառափայլն Արուսեակ....:
 Արեւ Արեւ:

Քրմապետ

Փա՛ռք քեզի, ու պերճ գահիդ
 Անահի՛տ,

Խումբ

Կ'սպասենք մենք հրաշքիդ
 Անահի՛տ:

Իր ձեռքին մէջ, բռներ է խիզճն, Անահիտ
 Մուրճի պէ՛ս,
 Սալին վըրայ աստուածային եւ ոսկի,
 Կը քանդակէ աչքերուն դէմ, հրաշքին
 Մեծութիւն....:

ԽՈՒՄԲ (եղանակաւոր)

Արեւ, արեւ,

Լուսնոս

Արեւ: Արեւ:

Ժողովուրդ (եղանակաւոր)

Հրաշք ու Արեւ:

Հուսնոտն նըման շղթայակապ խեռ ցուլին,
 Կապանքն ախտին կը փշրէ,
 Ու բազնետան դռնէն դուրս
 Կը նետուի:
 Ժպիտ, ծիծաղ, ու աղօթք,
 Մեհենատունն կը ծանրանայ զարմացման,
 Ու խորհուրդին կշիռքով:

ԼՈՒՍՆՈՏ (գրական պատկեր)

Արեւ, Արեւ,

Սրտիս մէջ:

Արեւ, Արեւ

Մըսիս մէջ....:

ՔՐԵԱԿԱՆ ԳԱՍՆ ՈՒ ԺՈՂՈՎԱՐԴ (եղանակաւոր)

Արեւ, Արեւ....:

Անահիտը՝ մեր գլխուն վերեւ

Հրաշք ու Արեւ....:

Մեհեանէն ներս ժխորու փառադրութիւն: Դուրսը՝ ե-
 րինջներ կը զոհարեւորին: Կատարուած էր հրաշքը: Բժըշ-

Կուած էր յուսնոտը: Նաւասարդի գիշերային հսկումը,
պէտք էր վերջանար հրաշքով:

Այգը կ'իջնէ անտառի մէջ արևուն աղօտովը: Զեփիւ-
ռը կ'երերցնէ տերևները ծառերուն: Էնոնէն կուգայ կարկա-
շի ձայնը անհանգարտ արուակի մը:

Լուսոյ Աստղը, գահավէժի մը ցած ճովէն, արծաթ կը
ծորէ անտառի մութ-կապոյտին վրայ:



ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԱՐԵՒԱԾԱԳԸ

(ԱՐԵՒԱԳԱԼ)

Գ.

Գրականությունը և գրականությունը
պետք է լինի մի և նույն բանը:

Մեր գրականությունը մի և նույն բանն է:
Այն է, որը մեր գրականության համար
պետք է լինի մի և նույն բանը:

Մեր գրականությունը մի և նույն բանն է:
Այն է, որը մեր գրականության համար
պետք է լինի մի և նույն բանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

(ԱՐԿԱՆ)

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Մի և նույն բանն է, որը մեր գրականության համար

պետք է լինի մի և նույն բանը:

Այգալույսը կը շորտորի, սահ կուտայ

Լերան դերձուկ կատարէն,

Հեալէն,

Մերթ կանգ կ'առնէ, կը խփայ

Կարկանդակներուն վրայ սեպ,

Գըլուխը իր քերելէն...

Կարծես կղզայ սարսուռը ցուրտ խաւարին,

Որ կը յամի յամաւորէն եւ դժկամ՝

Մընալ տակաւ ձորերուն մէջ, եւ անկէ՝

Նետահարել լոյսը տըկար, հեղ մըն ալ՝

Փորձել բազմը իր հուսկ նետին, կամ յաղթել

Եւ կամ ինչալ քաջաբար...

Ձի աչքն գիտէ, թէ սլարտուած

Մութը կըրնայ գայլերու պէս դաւադրել,

Պատանի է մինչդեռ ինք,

Խաւարն՝ արդէն ծերացած,

Պարմանութիւնն իր վատոյժ՝

Պիտի չուզէ բերել յանկարծ կշիռքի

Անոր հասուկ տալիքին...

Ու այգալոյսն՝ չափելով քայլն իր ոտքին՝

Եւ զգո՛յշ,

Առեփէն վար կ'իջնայ կամաց, իր որսին՝

Հսկող ճարպիկ կատուին պէս...

Ջորերու խոր, հովը մն'ղմ,

Իբրեւ ուղմերդ կը խշշացնէ տերեւներ,

Կը փորփոթէ անկէ անցնող գետակին

Ջուրերն անդորր, դարձնելով զայն ծաղկատար

Դէժք մ'աւեր:

Քարայրներէն դուրս կը խուժեն եղնիկներ
էգ ու արու, ծեր ու պարման, ու կ'երթան
Գետակին մէջ լուալ յոգնած շրթունքնին՝

Սիրոյ այրող համբոյրէն...:

Արջ մ'ալեւոր մանկութեան իր սէգ հէքեաթն

— Այժմ, բա՛րէ, հալումաշ —

Ծառէ մը ջարդ, կախեր ինչպէս նեխած թռք

Աստծուն դէմ կը ճառէ,

«Ինձ ի՞նչ տուիր, ո՛վ դուն, Տէր,

Որ ինձսէ

Կը պահանջես արդ հաշիւ

— Քեզի՛ ըլլայ այս նուէր...»:

Ու ոտքերովն իր արջի

Կը թնդէ զայն...:

Սոխակները կը լարեն՝

Երգը ալգուն, թելին վրայ սրտերուն,

Մինչ ագռաւներուն ամբարիշտ

Ջայնաշարի տողին վերայ կը ծրոնեն...:

Վահէվհեան մեհեանին մէջ կ'սկսի

Արեւագալ, փոխն ի փոխ կը կարդան

Գրակարգացները երկու:

— Անահի՛տ,

Խօսէ՛ մեզի ինչպէս մայր մը իր տըղուն

Եւ փափկութեամբ, գոգովանքով եւ սիրով...:

Անահի՛տ,

Անոր մէն մի, ցաւն կը ցնցէ իր հոգւոյն

Թելերն բոլոր, մէկ թելին պէս՝ նոյն յոյգով...:

— Աստուածունի

Մենք կը զղջանք մեղքերը մեր, քու առջեւ

Հեծեծանքով և լալագին, հեւ ի հեւ,

Նե՛րէ մեզի,

Զի մենք ծառայ երկրպագու անունիդ

Կ'սպասենք որ մայր մը ըլլաս, մենք սրբիդ:

— Օ՛, Տիրուհի՛

Իմաստնասուն, գեղեցկաձեւ. դէպի քե՛զ

Կը բարձրանայ աղերսը մեր սրտագին,

Հեզ ու բարի,

Ընդո՛ւնէ զայն, որպէս թ'ըլլար ան ինչպէ՛ս

Մաքի մը գէր ձօնուած ոսկի քու դա՛խին:

— Հայրդ՝ Երամագդ

Մասիրնակ, աշխարհակալ ու արքայ,

Կ'իշխէ մահուան, կ'իշխէ կեանքին ա՛լ վրայ,

Աղջիկ գգասո՛ւ

Անոր գանկէն ու հանճարէն՝ դուն ծննոր

Պր ըլլաս մեզ անգուղական իբրեւ մայր:

— Օրհնէ՛ տուններն, գիւղ ու քաղաք համօրէն

Որ քեզ օրհնեն,

Հողա՛ ծերերն, ու տուր անոնց շրթունքին

Արեւն վերջին,

Իմաստութիւնդ կ'ուզենք լրօել անոնցմէ,

Այդ՝ կր բաւէ...:

— Օրհնէ՛ կիներն,

Ծնունդն անոնց՝ ըրէ՛ բաղամ, օրհնարն՝

Ու մայրութիւն

Ըրէ՛ անգիւտ, ըրէ՛ չքնաղ ու բեղուն,

Նըման ալլոց՝

Երկիրը մեր, երբեք չզգայ ցաւ ու խոց...:

(պահ մը լռութիւն)

— Օրրոցին մէջ՝ լոյս դի՛ր, սեմէն ներս՝ արեւներ,

Դուն ես մեր տէր,

Զիւժի սեմն սրտնկութեան մը անարդ

Բիրտ լուծին տակ,

Հողին ըրէ՛ աստուածաձօն պառարագ

Բառը՝ հըրաշք...:

— Բարձր մաքուր, չձեռնուած, ըլլայ ան՝

Վարդի նըման,
 Եւ անկողին ձիւնափրփուր, միշտ մընայ
 Զօն Աստղկայ,
 Ըրէ՛ շԱՅ ՏՈՒՆ աստուածաշէն եւ անհուն
 Աստեղատուն:
 — Դէմքին վըրայ, դուն քաղակէ գուժը վէս,
 Մարմարի պէս,
 Ու պատնէշէ՛ մեզ ապահով, ամէն ժամ
 Աստուածութեամբը,
 Կ'ուզենք ընդմիշտ ապաստանիլ թեւիդ տակ
 Ինչպէս վառեակ:
 = Հարսերը մեր, դահիգ առջեւ զըւարակ,
 Եւ հանգանակ,
 Զոհաբերմամբ եւ զղջումով հոգեկուած
 ամօթխած,
 Անոնց սրտին մէջ, Անահիտ, ջահ մը դէ՛ր
 Արեւաթիւ:
 — Մեր աղջիկներ, գեղ ու գեղունոր հայրենի
 Հնամի,
 Ըրէ՛ միշտ կոյս ու անմատոյց ու անմեռ
 Պարիկներ,
 Զանոնք պահէ՛, ով, Անահիտ, հովէն խեռ
 Ախտաբեր:

(Կրկին լուսնիւն)

= Գրէ՛ ճակտին վըրայ հըպարտ տուններուն,
 Դիւղերուն,
 — Թէ կոյսն՝ միշտ կոյս եւ մաքրարիւն պիտ' ըլլայ,
 Զերթ լուսնկայ,
 = Նըման չողին, նման առուի երակին,
 Սա մարգին,
 — Ու ճիշտ նըման Արշալոյսի վերյառման,
 Դիւթական:

(Բշոցի եւ ծնծղայի ձայն)

= Դաշտերու մէջ, հովիտներէն ու հեռուէն,
 Դուն ցանէ՛,
 — Ամէն առտու շամանդող առ շամանդաղ
 Երգ ու խաղ,
 = Մեր տանիքներ, ցած պատերով զդենուն
 Յարութիւն,
 — Ու Երդիքներ, լսեն գողերգ, լսեն տաղ,
 Ու ծիծաղ:

(Մեհեանի նկուղներէն մեղիդի մը կ'երգուի)

= Ըրէ՛ այնպէս, որ երբ ամբան, լուսնին տակ
 Քնանանք,
 — Յողնաշարչար ու ջարդըւած գիւղին վրայ
 Ծիւղեր տայ,
 = Զգաստութիւնդ իրրեւ դալար ուռնին՝
 Որ հակի,
 — Մեր սեմերուն, խորհուրդին պէս գթութեանդ
 Հնաւանդ....:

(Ապաշաւ ու զղջում)

= Ազաղուն ենք, աւելի քան բաղեղէն
 Ու սէղէն,
 — Զարն կը ճմլէ մեզ ամէն օր, ամէն ժամ
 Ու վայրկեան,
 = Ինչպէս ողկոյզն, ոտքի ճնշմամբ կը քամէ
 Խաղողջուր,
 — Այնպէս ալ, Տէ՛ր, վիշտը անգութ կը ճգմէ
 Մեր աչքեր:

(Խնկարկում)

= Մեղ հովանի, ո՛վ Անահիտ, եղի՛ր դուն,

Օրն ի բուն,

— Ու մեզ օրհնէ՛, տիւ ու գիշեր, անդադար
ի բրեւ մայր,

== Ու կալ-կապէ Չարն ու Չարիք. որ չըլլա՛ն բախ
Մօտենան,

— Թէ մեր որդւոց, թէ հայ ցեղին, կ'աղաչենք
Քեզի մենք:

(Ծննդադրում)

== Քեզի կուգանք, լաւահառաչ, զղջումով,
Ողբերգով,

— Քեզի կուգանք զոհաբերմամբ. օրհնէ՛ մեզ,
Մօր մը պէս,

== Միրգին տեղ՝ սիրո՛ւ, զոհին տեղ՝ մեզ կը բերենք
Քեզի մենք,

— Փառքիդ համար, լոյսիդ ի տես, գահիտ վէս
Խոնկի պէս.

(Քարացած լուծիւն)

Կը վառի կրակն հեթանոս

Ակուծին մէջ պղինձէ,

Կուլայ առատ, աչքերը իր կը ճմռէ

Ծեր քրմապետն դեղձի պէս...

Այգալոյսը կը հալածէ ժթուծիւն

Չօրերուն:

Անահիտին տաճարին հետ երկնասլաց,

Աշտարակն իր կը մրցի,

Որուն կատարն, քուրմ մը թառած, կը նայի՛

Արեւուն,

Թէ ե՛րբ արդեօք Արեւ Աստուած պիտ' ծագի,

Եւ կամ պիտի լսուի ձայնը յաղթագոո

Անոր հըպարտ գուպարին:

Բռնած է ան զոյգ մը ծնծղայ պղինձէ

Արեւուն դէմ կը հսկէ,

== Նուիրական ես դուն, իմ Աստուածո՛ւ հի,

Փառքովդ Արարչի,

Արեանդ մէջ՝ արիւնս. նրման արհնարգի

Յուզմամբ կը յորդի...

Ծագէ՛, ո՛վ Արեւ: Օ՛, Արեւադալ:

Մենք քեզ հիւրընկալ:

— Երանգապնակդ՝ ես, վրձինը Արեւ,

Քանդակողը դուն ես,

Ոսկեծոյլ մարմնով տաճարիդ վերեւ

Կը կրփես դուն քեզ...

Ծագէ՛, ո՛վ Արեւ: Օ՛, Արեւադալ:

Մենք քեզ հիւրընկալ:

== Մարմար սիւներուդ վրայ պիտ' թաօին,

Լոյսերն ՀԱՆՃԱՐԻՆ,

Բանն Արամաղղայ հոգի պիտի տայ

Անոր՝ որ չըկայ:

Ծագէ՛, ո՛վ Արեւ: Օ՛, Արեւադալ:

Մենք քեզ հիւրընկալ:

— Ոսկի ու գոհար, մայր Աստուծուհի,

Ակը հըրաչքի,

Ըղիղիդ մէջէն Տեսիլքը կ'անցնի:

Հայաստան երկրի:

Ծագէ՛, ո՛վ արփի: Օ՛, Արեւադալ:

Մենք քեզ հիւրընկալ:

— Ոսկորս՝ ոսկրիդ մէջ, զօդուած իբր երկու
Գաղտնիքներ արու,
Հայաստան՝ դրախտ, տնդէորդը դու,
Ես՝ հազներդը քու....:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Հայրըդ քեզ ծընաւ, իբրեւ աստուած,
Անթերի ու պարծ,
Արեանդ մէջ խառնեց դեղը անդըրաւ,
Արարչմամբ անկաւ....:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Գրկիդ մէջ մարմար, հանդէս է ի թառ,
Գիրքը ոսկետառ,
Ուր տողին վրայ, բառին լնդէմ բառ՝
Կ'ըլլայ մեծ ՀԱՆՃԱՐ:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Մայրութիւնն ես դուն, երկունքով բեղուն,
Երկնեցիք մեզ դուն,
Գորովդ՝ հաւատք, չուքին տակ որուն
Կը ծաղկի ՀԱՅ ՏՈՒՆ....:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Փառքիդ կը նային. Եփրատն ու Տիգրիս,
Ինչպէս ցօղն՝ երկրիս,
Մարմարիդ վըրայ ոսկի կը հազնիս,
Իմ աստուածունհիս....:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Ուժըդ մայրութեանդ իր սահման չունի
Նըման անհունի,
Կայիր դուն, եւ կաս. նոյն եւ անյիլլի
Խորը հաւատքի....:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

— Երկինքն ու երկիր, կը զօդուն կարծես,
Հանգոյցը դուն ես,
Կը փարին իրար, պագի մ'համար վէս,
Սիրադրութիւնը դուն ես:

Ծագէ՛, ո՛վ Արփի: Օ՛, Արեւազալ:

Մենք՝ քեզ հիւրընկալ:

Քուրմ մը ծերուկ, դանդաղօրէն կը քաշէ
Սեւ վարագոյրն խորանին,
Որուն ետեւ, Արեւ արձանն լոյսը իր՝
Ասդիւն անդին կը ցանէ,
Ծնծղաներ գոռ հը հնչեն
Բագնի անյայտ վայրերէն,
Ըինչ քրմապետն կ'աղօթէ՝
Սեւ վարագոյրն. դանդաղ ու ծոյլ, վար կ'իջնէ:
Ծուխեր խունկի: Եւ մեղեդին ծուխին հետ՝
Հոգիէ հոգի կը շրջի:
Այգը մտեր քարայրներու մէջ խորունկ
Կը հալածէ գիշերն անկէ, ու անոր՝
Ճպտուն լոյսէ լեռնէ լեռ, ձորէ ձոր՝
Կը շաշէ,
Կը փախչի մութն, լեռապատա՛ռ, ու Արեւն՝
Այծի մորթով հասակը իր կը փռէ
Լերան վրայ: Արեւ, արեւ: Կը հնչեն
Պահակ քուրմին ծնծղաներ....:

— Լըսէ՛, դուն մեզ, Արամա՛գդ
 Քողը մութին ա՛լ վերցուր
 Մեր ըրերուն վերայն...
 Աչքերը մեր ա՛լ յոգնած են,
 Բիրքերն՝ աղօտ ու տըխու՛ւր,
 Սառ են կապեր խաւարէն...

— Դուն ես մեր Տէր, ամենակալ
 Տուր մեզի նոր Արեւադալ:

— Գիշերն դըրոյժ, ա՛լ հերիք է որ այսքան
 Ծածկեց երկիրն, ու խղճեց՝
 Մեր աչքին մէջ, մեր սրտին մէջ ու արեան
 Ճշմարտութեան խօսքը մեծ:
 Դուն ես մեր Տէր Ամենակալ,
 Բաշխէ՛ մեզ նոր Արեւադալ:

— Բլրէ լլուր, քարանձաւէ քարանձաւ
 Մահն ու գիշեր կը ծընին,
 Չար ոգիներ՝ որք կը լարեն անկղ դաւ
 Թակարդելու մեր հոգին...
 Դուն, ես մեր Տէ՛ր, ամենակալ,
 Չօնէ՛ մեզ նոր Արեւադալ:

— Երկինքն քուկդ է, երկիրը քու և ծովն՝
 Մարդկը քեզ երկրպագու,
 Զի բոլորն ալ մարմին ու միս են հագեր
 Արարչական կաւէդ քու:

Դուն ես մեր Տէր, ամենակալ
 Տուր մեզի նոր Արեւադալ:

— Զրմեռն՝ աշնան, ու ամառը՝ գարունին
 Կը յաջորդեն փոխն ի փոխ, ...

Նըման դարձող սայլանիւի ձգողին
 Զի դո՛ւն ես տէր եւ վարող,
 Արարիչ ես եւ ամենակալ
 Տուր մեզի տէր, Արեւադալ:

— Կ'ապրիս յաւերժ, դուն չը ծընար, մահ չունիս
 Բնակտրանդ է Մասիս,
 Ըստեղծեցիր հայ աստուածներ, որ ձընիս՝
 Աստուածութիւնը ցեղիս:

Արարիչ ես, ամենակալ,
 Տուր մեզի նոր Արեւադալ:

— Կ'սպասարկեն քեզ հանապաղ ու ընդմիշտ
 Զրանուշներ, սլարիկ՝ եր.
 Փառադրելով յաւերժութիւնը ուժիդ
 Երգելով նոր մաղթանքներ...:

Արարիչ ես եւ ամենակալ,
 Տուր մեզի նոր Արեւադալ:

— Քուկդ է Դժոխք, Արքայութիւն, Քաւարան,
 Կ'իշխես կեանքին ու մահուան,
 Առանց կամքիդ, չիշխեր շարժիլ, երկրիս վրան
 Գոյ ու անգոյ ոչ մէկ բան...:

Արարիչ ես եւ ամենակալ,
 Տո՛ւր մեզի նոր Արեւադալ:

— Հոգն՝ Նայիրի, Այրարատայ, Տարօ՛նի,
 Աստուածաշէն բազնեառն,
 Հայր Արամադդ, հոգեծնող Անահտի,
 Անոր վըրայ կ'իշխես դուն.

Արարիչ ես եւ ամենակալ,
 Տո՛ւր մեզի նոր Արեւադալ:

— Մենք կը վախնանք զարհուրանքէդ ահարկու
Անյիշատի Արա՛մադդ,
Եւ հայրական ու բարեգութ շունչէդ քու
Մենք կը դառնանք միշտ զգաստ:
Արարիչ ես եւ ամենակալ,
Տո՛ւր մեզի նոր Արեւագալ,

== Թո՛ղ չկտցեն բիրեքը մեր մեղաւոր
Կամքիդ հըլու ագռաւներ,
Կամ ծակծրկեն մարմինը մեր՝ ասեղուոր
Չարախընդաց ողիներ...:
Արարիչ ես եւ ամենակալ
Տու՛ր մեզի նոր Արեւագալ...:

ԽՈՒՄԲ (պոեմապոէմ)

Արեւ, Արեւ...

(Կը լուի ծնծղայի ձայներ՝ աշտարակէն)

Մարմարակերտ օթեակներ,
Կճեայ սեմով, որոնց մէջ՝
Գա՛հեր, գորգե՛ր, նիզակ ու սուր, ու վահան,
Սեղաններ կան երեսնոսէ եւ ընկոյզ:
Որոնց վրայ՝ նկարէն
Պերճ սափորներ, լնցուած ջուրով
Սեւ խցկըւած ծաղկեփունջով,
Բերուած երկրէն Տարօնի,
Յետոյ՝ փետուր գրիչներ,
Եւ հողաթուրձ կաղամարներ մարմետի,
Մագաղա՛թներ, եղէ՛գներ:
Սեմին վրայ արքայական օթեակին,
Ձոյգ առիւծներ կը հսկեն
Նըման գամփոփ,
Մինչ ճակատէն՝ թեւ կը բանայ արծիւ մ'սէգ,
Կտցած նիզակն, որուն վրայ՝
Կը կարգացուի մակագրութեամբ ոսկեգիր

«Անյաղթ Արքայ Հայաստանի»

Օթեակներ՝ ունին դեռ,
Արքայամայրն ու թագուհին, ասպետներ,
Հաղարագլուխն, դրանիկներ: Ու ասպետ
(վարագոյրը լման կը քաշուի)

Ահա՛ Վահագն եղէգնածին ու կրտկ,
Ակու՛թը՝ ոտքին տակ...:

Անահիտը՝ Ոսկիածին ու փաղփուն
Գրկին մէջ՝ մեհենագիրք
Ձոր կը կտցեն երկու ճերմակ աղաւեսակ:

Աստղի՛կ,
Սիրոյ քերթուած կը գրէ:
Չափը՝ իր շունչ, և Արուեստն՝
Ոճին շեղքով կը ձեւէ:

Դուրսէն կուգայ ձայն թառի, փանդիռի,
Պղնձատափն կը գո՛ռայ,
Մինչ կը սուլեն սրինդներ,
Ծնծղան ափին մէջ կուլայ...:

ԲԲՄԱՊԵՏ (ծանօր եւ հանդիսական)

Դրախտավայր Հայաստան
Չըկայ բընաւ քեզ նըման,
Երկիրն՝ լոյսի, կըրակի
Բեղմնափռի հանճարի...:

(Արքայական օթեակին վրայ հայ գրօշը կը բարձրանայ)

ԲԲՄԱՊԵՏ

Դուն քաղկերակ երկունքի,
Անմահ քառեակ քերթուածի,

Արուեստի դուն հսկայ ճիւղ
Դուն ես քերթող եւ գրիչ:

(Թագունին մագաղաթի մը վրայ գրէ
«Հայն՝ անյաղթ է»)

ԳՐԱՄԱՊԵՏ

Դուն կնքահայր պատմութեան,
Հանճարածին Հայաստան,
Անչափելի բարութիւն,
Դթութեան միւս ու արիւն:

(Դրանիկները կը համբուրեն արքային սուրը)

ԳՐԱՄԱՊԵՏ

Մոգութեան մա'յր, Հայաստա'ն,
Եւ արցունքի շատրուան,
Դուն հնաւանդ Առաքեալ
Արուեստի գիրք՝ բաղմածալ:

(Արքային գլուխը թագ կը դնեն ասպետներ)

ԳՐԱՄԱՊԵՏ

Անահտաձօն Հայաստան
Հին ՀԱՒԱՏՔԻ ծաղկեփունջ,
Պսակ փառքի եւ արեան...:

(Ժողովուրդը կեցցէ արքան կը պոռայ)

ԳՐԱՄԱՊԵՏ

Լոյսի ակունք եւ հեղեղ,
Դուն գաղտնիքի մեկնութիւն,
Արեւելքի Ոճն ու Գեղ...:

(Հանդարտ երկրպագութիւն ժողովուրդէն)

ԳՐԱՄԱՊԵՏ

Դեղահրաշ իմաստութիւն,
Եւ մայրութեան գարգմանակ,
Ու դարերու հնութիւն...:

(Կոյսերը կը խնկարկեն)

ԽՈՒՄԲ (Եղանակաւոր)

Աւանդութեան մեծ մատեան,
Շաղախէ արդարութիւն,
Գաղպինահամ ՀԱՅԱՍՏԱՆ...:

(Արքան եւ իր հեռուորդները օթեակներու առջեւ)

ԳՐԱՄԱՊԵՏ

Դուն քաղցրութեան ՆԿԱՆԱԿ
Մեղրալուսին հեշտանքի,
Աստուածութեան ԱՂԱՂԱԿ

(Թագաւորը մարգրիտ կը նետէ)

ԳՐԱՄԱՊԵՏ

Դիրին իմաստ: Կէտն՝ զգաստ,
Մագաղաթին Առեղծուած,
Քերթողութեան Մոռա'ստ...:

(Աղջիկներ՝ Նարդոսի բոյր կը ցանեն)

Ա. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Առատութեան շտեմարան,

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ

Բ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Ջուրի անհուն Աւաղան,

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ

Գ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Հոյսի ջրվէժ ու ճրագ

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Համեստութեան սփռանք

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ.

Բ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Խղճմտանքի անվրէպ նկատ

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ,

Գ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Եւ Արուեստի ԱՐԱՀԵՏ,

ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ:

(Թագաւորը կը համբուրէ զինանշանը)

Ա. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Անվերջակէտ յղութիւն,

Բ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Անդուգական մեկենաս

Գ. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Յաւերթական մարտիրոս,

Ա. ԳՐԱԿԱՐԳԱՅ

Եւ իրաւունք անսրխալ,

Գ. Գրականաց

Ընդվզում եւ յարութիւն,

ԴՐՄԱՊԵՏ

Հաւատքի սաղմոսաքաղ

Երգ-երգոց եւ Տաղարան

ԽՈՒՄԲ (միահագագ)

ՀԱՅԱՍՏԱՆ....

ԴՐՄԱՊԵՏ

Հոյս, լոյս: Լուր տամ քեզ

ՀԱՅԱՍՏԱՆ:

ԽՈՒՄԲ (եղանակաւոր)

Սիրոյ բազին եւ խորան

ԴՐՄԱՊԵՏ

Զի այս անգամ՝

Յեղս արի եւ արծուերի

Պիտի ծընի ԱՍՏՈՒԱԾԱՏԻՊ...

(Արքան իր սուրը կը բարձրացնէ)

Զինուորեանք (մեկեանի բաղէն կ'երգեն)

Հեծաւ արի արքայն Արտաշէս,

Ի Սիւսն գեղեցիկ,

Եւ հանեալ զոսկէօղ,

Շիկափոկ պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի,

Սրաթեւ ընդ գետն,

Եւ ձգեաց զոսկէօղ շիկափոկ պարանն

Ընկեց ի մէջ օրիորդին Ալանաց

Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,

Արագ հասուցեալ ի բանակն իւր....

(Զինուորական բարեւ ու յարգանք)

Բրմուհիները, ոսկի գաւաթներու մէջ, գինի կը մատուցեն արքայական տան անդամներուն, փոխարէն ստանալով ոսկի, արծաթ մարգարիտ: Աչտարակի կատարէն քուրմը կը հնչեցնէ իր ծնծղան՝ վերջին անգամ,

ԽՈՒՄԲ (եղանակաւոր)

Արեւագալ, արեւագալ,

Մենք՝ քեզ հիւրընկալ:

Արեւը՝ երկրին վրայ տորոնի գոյնով: Բոյները՝ երգով
կ'ողջունեն Արեւածագը: Գետ մը գիշերուան աղտը կը թօթ-
ուէ ուսէն: Մարգագետինները իրենց այտը կը լուան արեւ-
ւով, ու հովիտները՝ քունէն նոր արթնցող մանուկներու
պէս են:

Կաքաւները՝ լերան պառիկներէն վեր կը մագլցին ա-
բեւածովը ճեղքելէն: Ծառերու վրայ ու արտերու մէջ, սեւ
ազաւանները, արեւու դեղին պաստառին վրայ՝ ինկած կուպ-
րի հանգոյն....:



ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԱՌԱՒՅՏ

ԱՆԴԱՏԱՆ

Դ.

Արեւահայեաց բազնետան
 Պատուհանէն կը բխան,
 Ալիք, ալիք եւ նըման
 Անձրեւի յորդ հեղեղման,
 Լոյսեր դեղին արեւու
 —Ոսկի թիթեռ եւ մեղու—
 Գետնին վրայ կը գծեն
 Բիւր պատկերներ նկարէն:
 Ու մը ահա՛ լուսադիծ, գորգին վրայ՝ անթախիծ,
 Յամբ կ'որոճայ դունչն՝ սեմին
 Արքայական օթեակին,
 Ու կով մը հետ, կը փախչի՛, կոտրած արօրն ու սամին,
 Արտերէ՛ արտ, կորդէ՛ կորդ
 Մինչեւ գետակն մեծդդորդ:
 Գամիւներն լերան՝ կը նային ձորին իջնող կածանին,
 Հովիւն ուրկէ հօտը իր,
 Կ'առաջնորդէ անձանձիր,
 Ու սիրունին դէմն կ'ելլէ,
 Սափորն ուսին՝ կը կանչէ,
 Ո՛ւր ես հովիւ, սիրական, մատնին ես դուն, ես՝ ալ վրան:
 Ջայնը աղջկան կը դողայ,
 Հեծքի մը պէս կ'երկնեայ,
 Մինչեւ մարգերն հեռակայ, կ'ըլլայ արցունք եւ մեղայ,
 Որուն վիշտին չի կրնար,
 Հովիւը քաջ դիմանալ,
 Եղէ՛ք սրինգն կը կոտրէ, զայն առնելու ուխտ կ'ընէ:
 Վառեակները թաւամազ՝

Թխսմոր ետին հասն ի հաս,
 Քրմապետին կը կտցեն հողաթափներ թանկագին,
 Ու աքաղաղն կեցած թառ՝
 Գահին վըրայ լուսավառ
 Սպառնալիք կը կարդայ թող արծուին դէմն ահա:
 Կուգան արդէն աղջիկներ
 Շալկած ծաղիկ ու խուրձեր,
 Շրթունքներնուն մէջ սիրերդ, ոտքերնուն տակ նոր պարերդ,
 Կամ իրարու կը պատմեն,
 Աիրոյ հէքեաթն անցեալին
 Երբ կը նստին ալ յողովուն քով սիրարւած:
 Ոմանք աշտեր կը լուան
 պաղ ջուրին մէջ գչգչան,
 Կը լեցուի լայն աւազան, պագովն դաշտին հոտեւան,
 Որոնց ի տես աղջիկներ,
 Ինչպէս կամշոտ պարիկներ,
 Կաթնաղբիւրէն փախ կուտան, «դաշտին մեղքը» կ'ուրանան:
 Պառաւ հանին տշալէն
 Կը վերելքէ բլրակէն,
 Կրնակ առած տիկ կաթին, իբրեւ սիրող այր ու կին,
 Ծերութեան կը քալեն
 Թոռնիկն ալ իր ետեւէն,
 Պապուն մահակ ձի բրած, թամբն է գարուն անկասկած:
 Թիթեռնապար կ'իջնան վար,
 Պատուհանէն լոյսերն յար,
 Քրմապետ պերճ գահին, արքայական օթեակին,
 Արձանին վրայ Անահտայ,
 Ակութին մէջ պղինձեայ,
 Խելայեղած կը պարեն, մինչ պարիկներ կը ծափեն...:
 Քուրմ մը յայնժամ մեծին մօր,
 Ու ամէն կողմ, շուրջբոլոր,
 Աշտանակներ ոսկեպատ, կը զետեղէ իբրեւ գարդ,
 Որոնց ծայրերն կ'ազուցուին
 Ծոպէրն՝ փայլովն արեւին,
 Ու ծաղիկներ գոյնզգոյն, դեղին կապոյտ ու արիւն:

Բայց ամենէն աւելի,
 Հպարտօրէն կը փայլի,
 Արքայածօն աշտանակն, թագին իբրեւ յիշատակ:
 Խունկ ու բուրվառ, մեղեդի,
 Քընց, ծնծղայ, ձայն դափի,
 Յանկարծ ներսը կը մտնեն, մեհնաառան մեծ դռնէն,
 Երկու գեղկազմ ասպետներ,
 Ջեռքերուն մէջ՝ վահաններ,
 Ասպարն մէկուն՝ քանդակուած ունի առիւծ մը կատղած,
 Կը թեւածէ մինչ միւսին՝
 Արծիւն ձիւնեղ Մասիսին:
 Կ'ողջունեն նախ հայ արքան, զօրագլուխն՝ ալեծամ,
 Մայր թագուհին եւ բամբէշն,
 Իշխանիկները ըմբիշ,
 Յետոյ կ'երթան հսկելու, օթեակին սեմն, դէմն որու՝
 Դիրքով պատրաստ կը կենան
 Ըմբոստ վագրի մը նման:
 Կը հաւաքուն քրմապետ, Անահտաձօն աղջիկներ,
 Գրակարգացքն ու քուրմեր, քրմուհիները բանգէտ,
 Եռոտանին գուշակին,
 Կը պատնիշեն շուրջբոլոր,
 Աղօթք, զղջում: Ծնրաղիր, ու կը մնան անյարիր:
 Քչոց, ծնծղան կը դադրին,
 Լոկ կը սահի մեղեդին՝
 Հագագէն դուրս, գերթ խորհուրդ սիրտերու մէջ՝ խոր
 ու մութ:

(Աղօթուորները կը նային Տիւրի արձանին)

Հայեացքը շեշտ կ'երկարի: Դէպի արձանը Տիւրի,
 Ուրկէ կուգայ դէպ՝ էրենց,
 Գուշակուհի մը երէց,
 Ջեռքը բռնած գաւազան, ու կուրծքէն կախ՝ մոգութեան
 Մասնատուփը, որուն մէջ՝
 Նեկտարն կընէ ելեւէջ,
 Աչքերը իր յողոված են, գրքին վրայ նայելէն,

Շլմոր բիրեն հը կանչէ
 Կրօնքն՝ հիւսուած կրակէ,
 Թէ՛ «մահէն վերջ կը մնայ, կեանք մը մեզի յարակայ,
 Ունայնութիւնը ի զուր
 Անմահութեան գոցէ դուռ»:

Իմաստութիւնն կը յածի
 Կնճիռներէն իր մէն մի,
 Եռոտանիին վրայ կ'ելլէ, հանդարտօրէն կը նստի,
 Գուշակը կին, ցոյց կուտայ
 Մագաղաթը երկծալ,
 Մեհնադրոշմն հնամեայ, երեք կապոյտ ուլունքներ,
 Մատենկնիքն սրբազան
 Եւ մարմարէ շինուած պղտիկ թերափներ...:
 Եռոտանին սրբամած
 Օձի խորխով է պատած,
 Ու ոտքերը կը խրեն, բիրերու մէջ հրաշքին,
 (Դող ու սրփուք)

Հաւատքը ծանր կը ճնշէ՝
 Հողիններուն եւ սրտին,
 Բազնետան մէջ կը տիրէ անպատմելի լռութիւն,
 Մինչ ժողովուրդ կը ծնրադրէ,
 Հաղարապետն ու արքան
 Բարեւի կը կենան:

Պուսակուհի

Տիւր, դուն գիտես
 Բոլոր գաղանի ճամբաներ,

Ժողովուրդ

Դուն գիտես,

Պուսակուհի

Մեզ կը վարես,
 Ինչպէս հլու ոչխարներ,

Խումր

Մեզ կը վարես:

Պուսակուհի

Բուկդ է ներկան,

Քրմայե

Ապագան,

Ժողովուրդ

Բաց ափի պէս

Դուն կը կարդաս ամէն բան...:

Պուսակուհի (Երկար բեղմնաբեր)

Օգնէ՛ մեզ

Օգնէ՛ մեզ:

(Երեք կոյսեր եռոտանիին քով ծնկաչոք կը մնան)

Ա. Կոյս

Պատգամաբեր ո՛վ Տիւր

Պատգամաբեր մեզ այսօր տո՛ւր:

Բ. Կոյս

Մեր հողինները լեցո՛ւր,

Կամքերը մեր զօրացուր:

Գ. Կոյս

Արդարադատ ով Աստուած

Կշիռն՝ քուկդ է, վճիռը՝ քու,

Երէկն, Այսօր եւ դեռ ԳԱԼԻՖՆ մթամած

Կախում ունին խօսքէդ քու:

Թելերն յօնքին՝ ձիւնաթոյր,

Պառիկէն վար, նըման նայող արծիւին:

Բերին բաժակն, ջուրին մէջ՝

Հողէ աման ընկղմած:

Հո՞՞մ մազուտքը իր կզակին կը խռովի

Ջարհուրութեամբը մահուան:

Պատկառազգու, խոնարհամիտ ու տըխուր:

Ընթերցման հետ՝ ճակտին մորթը մերթ կ'իջնէ
Կամ՝ յանկարծուտ կը բարձրանայ, կը փոթի
Վարագոյրի մը նման...:

Պուսակուհին

Հայ աստուածները՝

Խումբը

Եօթ են...

Պուսակուհին

Չոհարանները՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Բազնետուները՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Սուրբ քաղաքները՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Բարձր լեռները՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Անմահ գետերը՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Կրօնքի գաղտնիքները՝

Խումբը

Եօթ են:

Պուսակուհին

Արամա՛զդ,

Խումբը

Աստուածներու ամբողջութիւն
Ինքնարարիչ էութիւն...:

Պուսակուհին

Անահիտ,

Խումբը

Աստուածամայր սսկեծը՛ղի,
Ակը գութի եւ խղճի՛:

(ցորեն ու ծաղիկ կը տեղայ եռտանիին վրայ)

Պուսակուհին

Եղէգնածին:

Խումբը

Զինքը ծընան երկիրն ու ծով
Կրակի մէջէն՝ եղէգով...:

Պուսակուհին

Ասողի՛կ:

Խումբը

Աստուածուհի հեշտանքի:
Ծովն համբոյրի ու սէրի:

Պուսակուհին

Տիւր:

Խումբը

Նախադիտուն, գալի՛ք լիմաց
Գաղտնիքն՝ գիրք է էջը բաց...:

Պուսակուհին

Լուսի՛ն:

Խումբը

Լուսի՛ն, լուսի՛ն, Ոճը՝ ուսին,
Շնորք ձօ՛նէ քերթողին,

Պուստկուհին

Արեւ,

Խումբը

Կը վառիս դուն ով Արեւ

Շողդ՝ հանձարի յորդ անձրեւ:

Քրմապետ

Մեկնիչ բանին ու երազին

Մոգովորդ

Տիւր:

Հանդոյցն ես դուն Անձանօթ,

Մոգովորդ

Տիւր:

Պուստկուհին

Կենաց գրքին արձանագիր,

Դուն կը գրես ճակտին գիր,

Մոգովորդ

Տիւր:

Պուստկուհին

Եւ գրես չարն ու բարին,

Ու հոգիներ կը կշռես,

Նժարովը կշիռքին...

Մոգովորդ

Տիւր, ո՛վ Տիւր,

Պուստկուհին

Մաղէ կամուրջն պիտ' անցնին

Չարն ու բարին անխտիր,

Խումբը

Անխտիր,

Պուստկուհին

Մեղքը ծանր է, կամուրջին

Մազն պիտ' փրթի կշիռքէն իր...

Մոգովորդ

Կշիռքէն ի՛ր...:

Քրմապետ

Արդար ըրէ մեզ,

Տիւր, կ'աղահենք յեզ:

(գետուրէ գրիչներ եւ որդան կարմիրէ մեջան կը նուիրուին)

Գուշակին բիրը լայնցած է

Խորհուրդէն, ու դէմքը սառ ու դեղին,

Յոգնած, վատուժ ու ծեր,

Կը պաղատի, կը հայցէ,

Կը թալթըլկի ու կուլայ...

Պուստկուհին

Մի մերժեր մեզ,

Յօնքերն ահոր՝ կատղած հովէն ալիքուած

Անտառին պէս, ու ճակտին՝

Առկին ամպոս ու տըխուր:

Պուստկուհին

Տէ՛ր, գըթա՛ մեզ,

Ճերմակ մազերն, կարկուտահար ցորենի ա՛րտ,

Արդահատանք ու աւեր՝

Միրտը կընեն ցրտառարսուռ քարայրներ:

Տիւրէն մերժուիլ, դըժուար է,

Հրացանի փողը գոցող լաթին պէ՛ս,

Վարանքն յանկարծ իր կոկորդը կը խծկէ:

Բայց ո՛վ հրաչք, ամպի տակէն, յեղակարծ,

Մարդուն ժպտող արփւոյն պէս,

Իր խոնջ դէմքը կը պայծառնայ, կը փայլի՝

Քաղցր տեսքով մանուկի:

(Արքան, հաղարագլուխն ու բոլոր արքայականները կը մօտենան եռոտանիին, հարցուկը կը կարգայ անգիր, ոսկեայ պնակի դէսը):

Պուստկուհին

Արեւ: Աստղեր: Լո՛ւսին:

Առիւծներ կը ծընին,

Բիրէն արամազդին:

(Թագաւորը՝ զաւառ մը կը խոստանայ Անահիտի մեհեանին)

Պաշտօնական

Արքայ: Բանակ: Յաղթե՛րդ:
Դափ ու փանդիւ: Եւ խնջոյք:
Արքան նստեր է նըժոյգ...:

(Թագաւորը՝ ոսկիէ եռոտանի մը կը նուիրէ Տիւրին)

Պաշտօնական

Օ՛, Արարատ, Արարատ:
Վինին մէջ խոր, յանցապարտ՝
Կ'արտասուէ սէգ Արտաւազդ:

(Թագաւորը՝ մարդրիտ կը ցանէ ու թագուհին՝ իր ապարօշը
կը ձօնէ: Ժպիտ ու փափօտք)

Պաշտօնական

Կտրե՛ցէք ձայնը մուրճին
Ձի անցաւ դարն, միասին՝
Իմաստը հօր անէծքին...:

(Հայ մետաղագէտը եւ Հայաստանի անյաղթելի-
ութեան պատգամն է ասիկա. թագաւորը՝ իր հրճուանքէն,
երկու անտառ, չորս հովիտ եւ դաշտ մը կը նուիրէ Անահի-
տի քուրմերուն)

Պաշտօնական

Հայաստան,
Արեւելքդ՝ անատոլիւն,
Ծիւ ու կանաչ: Հասկերուն՝
Ծովը պիտ' հասնի արեւուն...:
(ցորենփունջ մը կը զետեղուի եռոտանիին վրայ)

Պաշտօնական

Հայաստան,
Արեւմուտքդ՝ հարսնիք ու թառ,
Գինի ցըքի, խօլապար:
Սիրտ՝ սրտին մէջ ձինհաւ...:

(Նարօտ կը կապեն, եռոտանիի ոտք սպասող աղջիկները)

Պաշտօնական

Հայաստան,
Հարաւդ՝ խաղաղութիւն,
Պիտի ըլլայ, արդարութիւն՝
Դափնեպսակ տուներուն:
(Արքան կը համբուրէ մեհեանից գիրքը)

Պաշտօնական

Հիւսիս. դրօշն հայկական,
Պիտ՝ ծածանի, եւ փախ տան
Դաւադիրներն պոնտական...:

(Արքան, Անահիտին կը ձօնէ հնադարեան դրօշակ մը)

(Արքայականները իրենց օթեակները կը քաշուին,
Կ'արթննայ գուշակունին, գեղեկոտ քայլերով կը հեռանայ,
մինչ Անահիտի արձանին պատուադանի դռնակը կը բացուի,
ուրկէ դուրս կ'ելլէ գեղանի քրմուհի մը ձեռքը բռնած կրօ-
նապետութեան դրօշակը, անոր կը հետեւին 15 եօթնեակ
կոյսեր, Հայաստանի 15 նահանգներ խորհրդանշող, կ'սկսի
հեթանոսական պարը՝ չափական ընկերակցութեամբ նուա-
շի):

Ա. Պար

Բարձր Հայքի եօթնեակը ուռիի ճիւղեր ունի մազերուն մէջ,
Հագած է ծիրանեգոյն, ոտքին՝ սանտալ,
Ձեռքերն ու ոտքերը մերկ, գլուխը քօղուած,
Կ'երգէ ու կը պարէ:

Երանելի, աստուածաշունչ դու երկիր,
Դարանաղի եւ խալիբ,
Շատգոմք, Կարին, Մանանաղի, ու Մնձուր
Բազին ես դուն խնկաբոյր...:

Արամազդայ Տեսիլքն ես դուն Հանձարին
Դուն իմ Արեւ ու Լուսին,
Գեղեցիկ ես եւ անթերի կիսանդրի
Ճառագայթող Անահիտ:

Դուն ես, դուն ես, չըկայ քեզ պէս, ով չքնադ
 Խորշ մը մաքուր ու խաղաղ,
 Դիւղերուդ մէջ անբրժութիւն կը ծաղկի
 Նըման պարման ուռենի...:

Բ. Պար

Չորրորդ Հայքի եօթնեակը կուրծքէն կախած է նկա-
 քաղարդ մագաղաթ մը, հագած է տորոնի գոյնով, պարե-
 լն առաջ մագաղաթը կը համբուրեն:

Բալահովիտ, Հանձիթ ու Ծոփք, Պաղնատուն,
 Լոյսի երկիր, արեւոճն,
 Մէն մի աւեր ու չերտն հողի կը բաւէ.
 Գնել լեռ մը մարդարտէ:

Պարիսպներուդ շաղախին մէջ կը հեւայ
 Ըղեղին լոյսը փարթամ,
 Ու բերդերու գոներէն քանդ, փախ կուտայ
 Անցեալն՝ իբրեւ աղսամբ:

Լեռներդ բարձր են, դարերն շուա՛ր անոնցմէ
 Աղօտ աչքով կը նային,
 Մագաղաթի մէջէն թափուր կ'աւաղէ
 Ձայնը հսկայ Ունայնին:

Գ. Պար

Աղձնիքի եօթնեակը որդան կարմիր հագուստներ հա-
 գած է վայրի վարդերով զարդարուած:

Չըկայ արուեստ, չըկայ թռիչք եւ թեւթափ,
 Առանց ըմբոստ ոգիի,
 Ինչպէս գարունն, ու իր ցնորքն սիրատարի
 Առանց ձմրան ձանձրոյթի:

Կ'ոտնահարենք ամէն կարգի աշխատանք
 Որ քրտինքին բոյր չունի,
 Եւ երկունքներ, եւ սանդղոճ, անդռնա՛նք
 Ուր ցաւն՝ իր ցաւը չունի:

Լաւ է ըլլալ, յաւէտ կոպիտ ու վայրի
 Քան պաղատող ուռենի,
 Լաւ է ըլլալ սպասաւոր հրդօրի
 Քան մեծ արքայ տըկարի...:

Դ. Պար

Տուրուրերանի եօթնեակը, փետուրէ գրիչներ ունի է-
 քըր խորհրդանշան, և հագած է խակ ընկոյզի ներկով հա-
 գուստ:

Արածանիի ափն ի վա՛ր,
 Կը թափառին դպիրներ,
 Ջերքերնուն մէջ՝ կաղամար,
 Ու գանկէն ներս՝ Տեսիլքներ:

Այգ կ'որոնեն ու խորհուրդ,
 Քերթուածի մը համար լոկ,
 Կը ներշնչուի մեծ շամբուտ
 Գաղափարէ մը նորոգ:

Մո՛ւթ է: Մութ է: Տարօ՛նի
 Դեռ չէ բացուած Արշալոյս,
 Գրչին վըրայ կը պողի
 Օրհներգութիւնն հեթանոս:

Ե. Պար

Մոկաց եօթնեակը հագած է կանաչագոյն զգեստ, ճակ-
 արին միջինքէն կախուած արծաթագոյն արծիւներ, արծուէ
 աչքերուն կը նային:

Մեր լեռները սոսկում ունին ու հեգնանք,
 Իրերուն դէմ՝ ու պատմութեան ա՛լ անցած,

Քնքոյն ու կերթն, մանին ու նրբին, — ինչ պոքանք —
Պիտի մնան մեզ անծանօթ ու ատուած:

Ձորերուն մէջ, մեր հայրենի լեռներուն,
Պիտի չիչխէ ցանծն ու վախկոտն, վար իջնա՛լ,
Ուր կաղնիներ, մթնանշմար աստղերուն
Ողջոյն կուտան, սիրուըտութի մը համար:

Անտառներու մթութեան խոր մինչ հաղիւ
Կը ճախրեն սէգ ու սրբատես արծիւներ,
Որոնց աչքին ներս կը վառին, բազմաթիւ
Դեռ չերկնուած ու անանուն արեւներ:

Զ. Պար

Կորճայքի եօթնեակը կոտրած աղեղներ ունի, այտը՝
անտնց կը քսէ: Հագած է թրծուած հողամանի գոյն հա-
գուստ,

Օ՛, Որսիքանք, Կարապունիք, ու ձա՛նկ,
Արշտուանք, Այգառք, զոյգ Աղբակներ և Կորդուք,
Երկիրն քաջաց, արի արանց
Եւ օրօրոց դիւցազանց:

Բաբելոնէն եւ Նինուէէն աւե՛լի
Ոսկորներէդ հնութեան ճիւղ կը լսուի,
Կըկոցի պէս կը կասի
Երգդ յողնած ու բարի:

Յանուն քեզի եւ ծերութեանդ պսակին,
Կը համբուրենք երկաթալարն աղեղին,
Ուրկէ կ'առնենք ձայնն՝ երգին
Քաջամարտիկ Կորդուքին...:

Է. Պար

Պարսկահայքի եօթնեակը հագած է արեւադոյն,
Արեւադրօշը իրենցն է, կը համբուրեն զայն ա՛նիւ,

Մենք կ'ողջունենք Արե՛ւ, քե՛զ,
Ամէն առտու,
Զի մենք գիտենք, լոկ դուն ես
Պարգեւատու:

Լոյս ի լուսոյ, և Աստուած
Կեանքի ճրագ,
Կ'այրիս բայց դեռ չեա հատած,
Աղուր հըրաչք:

Սկիզբն՝ գիտես, եւ վախճանն
Դո՛ւն ես, դո՛ւն ես,
Թուրձը կեանքին ու մահուան
Միայն դուն գիտես...:

Ա. Պար

Վասպուրականի եօթնեակին խորհրդանշան բեւեռա-
դետը, հագած է ծովագոյն,

Ռչտունի՛ք, դո՛ւն ձօնեցիր
Ոստանը՝ լուսնին,
Ու Վան եղաւ թագակիր
Նայիրեան փառքին:

Ծովը Բզնունեաց ու Արշակ
Երկու մագաղաթ,
Անոնց վրայ դարերն հակ՝
Տըխեղձ ու գունատ:

Արտամետէն մինչ Ոստան
Անդոյգ ծաղկատան,
Դարը ձի է, թամբը՝ Վան
Հեծնող Աղագան...:

Բ. Պար

Սիւնիքի եօթնեակը իր սուրը կ'օժէ արեւնով, հագած

է կարմիր հագուստ,

Գեղամայ ծովը՝ կը լարէր թառ
Անդադար,
Լարին վերայ, լար՝ կ'ըլլար
Երգ ու պար:

Գեղարքունիք ու Զանգեզուր
Կը ծախեն,
Մինչ աղջիկներ գեղազանգուր
Կը կայտուն:

Ախնի՛ք, սուրբդ արիւնաներկ
Կը մնայ
Մեզ յիշատակ, յաղթերդ
Մը վերայ:

Ճ. Պար

Արցախի եօթնեակը իբր խորհրդանշան վահաններ ու
նի, հնութիւնը մարմնաւորող նշանադրով, հագած է շու
շանի գոյն տարազ,

Մենք սիրեցինք երկիրը մեր
Աստուծու պէս եւ Անթերի,
Անոր վերայ տիւ ու գիշեր
Աւանդութիւնն՝ երգ կը բանի:

Օ՛, Գանձասար, Շուշի, Շամքոր,
Դո՛ւք քաջազարմ եւ քաջութիւն
Վանանդէն Կողթ, զերթ ձիաւոր
Կը թեւեն դարն եւ պատմութիւն:

Մենք՝ հաւատաւոր, ու մեր երկիր
Աստուածակերտ մեհնատուն,
Ակութիւն մէջ արեւածիր
Կ'այրի հիւթը մեր սիրտերուն...:

Ծաղիկի մէջ, ծաղիկ ես դուն,
Սաղմըդ՝ Աստուած, եւ Աստուած՝ դուն
Խորհրդատեար՝ սակայն որուն
Բիրին մէջն է մեկնութիւն...:

Ճ. Պար

Փայտակարանը իր արեւանդրին ունի, շլացիկ ու ճա
ռագայթաւոր: Ճառագայթներէն մէկը երկար է բոլոր
միւսներէն, այդ կը ցուցադրէ այն թելը՝ քրով՝ ըստ աւան
դութեան, Արամազդը Արեւը կախած է երկինքէն, զայն
ազուցելով երկնային աստծու մը ոտքէն, հագած է ձիւնա
գոյն տարազ:

Կ'անցնիս վերերէն,
Աստուած հրեղէն,
Ոտքիդ տակ՝ երկիր
Տերեւ փոքրադիր:

Բարձր ես դուն ու հոռուն
Զի հասնիր մէկուն,
Զեռքը բռնաւ քեզ,
Գաղտնիք ոսկեգէտ:

Սաղմն ես կենսատու,
Քեզմէ կ'ը հեղու,
Մէրն ու բարութիւն՝
Զոյգ աստուածութիւն:

Կ'անցնիս վերերէն
Երկինքին մէջէն,
Ոտքիդ տակ երկիր՝
Մեռել անյարիր...:

Ճ. Պար

Ուտիաց աշխարհի եօթնեակը, պողպարք մը ունի,
թարմ ու ջրուտ, գարունը՝ անոր մէջէն սառ դրեր է ամ
բան ուսերուն վրայ: Հագած է դեղին,

Պտուղին ներսն է գիշեր, — կեղեւէն դուրս՝ ցորեկներ,
 Կը համբուրուին բրարու,
 Սիրողներու պէս երկու,
 Մինչ գիշերէն կը հոսի,
 Ձերմութիւնը յոյր մըսի,
 Յորեկներէն ծոր կուտայ — Տարփանքի հիւթն մծղնեայ:

Չեղան երբեք, մութն ու լոյս, թշնամիներ տենդայոյդ
 Մէկն՝ միւսին մէջ դերիչսող,
 Մէկը միւսով՝ պարծենցող,
 Նըման ուժեր՝ համակամ,
 Ու հրաշքներ անթարշամ,
 Հաղորդակից ու զուգորդ, կեանքը անոնց՝ ժառանգորդ:

Ծճարտութիւն չկայ իսպառ առանց սուտի անարդար.
 Ձկայ լոյսը առանց մութի,
 Ու մութն՝ առանց արեւի,
 Անոնց մերձամբ կը շաղուի,
 Կաւը՝ մաքուր երկունքի,
 Ի՞նչ ենք ՆՍ, ԴՈՒՆ, եթէ ոչ, նոյն իսկ այդ կաւն և նոյն ՈՃ:

Ճ.Պ. Պար

Գուգարքը ներկայացնող հոթնեակը արծուի թեւեր
 ունի, տեղ տեղ արիւնազանգ բիծերով, կը ցցէ օդին
 մէջ ու կը պարէ, հագած է ցորնագոյն,

Գո՛ւգարք, հողը՝ բազին ու խորան,
 Լուսինն ալ քեզ Անահտաձօն խնկաման,
 Բիբերը մեր կ'ուզենք այրել բազնիդ մէջ
 Իբրեւ հաւատք, իբրեւ խորհուրդ մը անշէջ:

Տաշիր, Ջաւախք, Արեւին դէմ՝ խնկարկու,
 Հըրաշքի մէջ՝ հրաշք կ'ըլլաս Պօրչալու,
 Արտահանէն կը լսուի ձայն մը հնչեղ,
 «Գուգարքն Դաբիր՝ արարչածին է հայ ցեղ...»

Ծովն հիւսիսոյ քառամանեակ շար ի շար,
 Եթէ երկինքէն աւ Անհունէն վար իջար,
 Անոր եզերք, Կդարչքն եղաւ հարսնցու
 Եւ Ձորափոր՝ աւանդական ձօնը քու:

Ճ.Պ. Պար

Տաշքի հոթնեակը, մանգաղներ ունի, հագած է մոխ-
 րագոյն, արտ հնձելու գիրքով կը պարէ,

Արտ ցորեանի՛,
 Հովը մէջէդ երբ կ'անցնի
 Հասկը հասկին՝ սիրաբոյր
 Կուտայ համբոյր...:

Գուդձին վերայ
 Քիրտն՝ Աստըծու դէմ կուգայ,
 Մինչ մաճկալին բարձին տակ
 Կ'աճի ՊԸՍԱԿ...:

Արտ ցորեանի.
 Մշակի ծովէդ երբ կ'անցնի
 Հետքերէն իր տրեխին
 Կ'երգէ որդին...:

Մուրկը հո՛ւր է,
 Արտը բոլոր, կը լափէ՛
 Չըլլայ արտէն դուրս ելլէ
 Դիւղը այրէ...:

Ճ.Ն.

Այրարատի հոթնեակը՝ գլխուն թաղեր ունի, հագած
 է լազուարթ: Կարմիր սանտալ:

Արքայից տուն, իշխանաց բոյն, Այրարատ,
 Հնութեան ծառ, լոյսի բարբառ, Այրարատ,
 Բանին ակունք մութ շարական, Այրարատ,
 Ոստանաշատ, աւանդամուլ, Այրարատ,

ԱՄԷՆՏԵՐ (կր պարեմ)

Այրարատ, Այրարատ,
Արքայից դուռն Այրարատ:

Այրարատի Խօրենակը, (առանձին)

Գահն՝ երեւան, ու կարս՝ վահան արքենի,
Գահին վըրայ՝ կ'երգէ դարը հնամի,
Անին նստեր ավին Արաքսին կը նայի
Զիւնափրփուր, անմատչելի Մասիսին:

ԱՄԷՆՏԵՐ

Անին նստեր կը նայի
Զիւնափրփուր Մասիսին:

Այրարատի Խօրենակը (առանձին)

Դուռն՝ կը մեռնիս, բայց կը ծնիս վերստին,
Լոյսի հեղմամբ, փառքի օծմամբ Արեւին,
Դարը՝ դուռն ես, Անցեալը դու եւ ներկան
Դուռն՝ արահետ, հայկեան ցեղի պատմութեան:

ԱՄԷՆՏԵՐ

Դուռն Արահետ,

Հայկեան ցեղի

Պատմութեան...

Փանդիոնի պղնձադափի, քչոցի, ծնծղայի եւ ծափերու
գոռ ու երկար համանուագը, վերջ կուտայ անդաստանին:

Լեռներէն կը տեսնուի խոտի դէզեր: Անտառներու մէջ
ամառը կուլայ, դետինը ինկած դեղին տերեւի մը վրայ:

Զորքեր են հեղեղատները: Դոմէշ մը՝ պոչը փարտելէն
ու անհոգ, կ'արածէ արտի մը հունէն: Անաշխատ ձիերը կը
վրնջեն ու աչնան սարսուռը կ'անցնի անոնց ոռնգերէն:

Բայց, կալերու մէջ, դեռ կ'ամնուած ցորենի բարդեր
կան: Քրտինքը թմրած է, հոնկէ անցնող մշակին ճակտին
վրայ: Բարդի մը տակ ուլ մը կ'որոճայ, աչքերը գոց ու
դանդաղ: Աշունը՝ կը հսկէ գիւղը մտնող ճամբուն: Նշան-
ուած աղջիկ մը՝ իր մատնիին կը նայի, հարսնիքի օրերը
մօտ են...:

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ԱՌԱԽՑ

ԵՓՐՍՏԱԿԱՆ

Ե.

Բազնետունը շրջապատուած է ծառերով,
— Ուռի, տանձի, թուփի, ծիրանի, խնձորի —
Անոնց մէջէն, օձագալար կածաններ
Շուքերու մէջ ու հանդարտիկ կը սողան,
Կ'երթան մինչեւ մոնաղներու խցիկներ,
Մերթ կը զատուին, մերթ իրարու կը մօտին,
Թնջուկի պէս կը խառնուին, ու կ'երթան
Բլրէ մը վար, երակներու պէս ջուրի
Կ'իյնան վար,
Անդունդին մէջ՝ ճամբաները այդ կ'ըլլան
Մեղուններու խեռ տարմեր,
Ամբան տաքէն կը քոտած,
Ու կը կռուին, կը հայհոյեն մէկմէկու,
Խայթոց՝ ընդ դէմ խայթոցի,
Զօրն գիակով կը լեցուի:

Սօսիներու անտառացում՝ առլեփէն:
Կը նշմարուի, ջուրը արծաթ գետակին
Տերևներէն, թուփերէն:
Զինուորական ու արքենի վերաններ
Զինասպիտակ, ու սունկերու նստուածքով
Գետին ափ,
Էւ կամ՝ նրման օտար երկրէն, նոր եկած
Արագիլները ճերմակ,
Կը թափառին գետին ափէն, ի խնդիր
Շիւղի, յարգի ու սէզլի:
Բոյնը գիւղին աւերեր է
Զիւնէ, բուքէ, կարկուտէ,
Հիմայ պէտք է կարկըտէ,...

Արքայական վրանին առջեւ կը կենան,
Պահակները եօթնեակ,
Որուն ծայրէն կը փաղիթ
Եռատերեւ զրօշակ...:
Կանանչահիւս տաղաւարներ քառասին
Նստարաններ, եւ աթոռները ընկոյզ
Որսկան շուններ, զէնք ու վահան, նաժիշտներ,
Եւ կովկասեան պարուհիներ եզական:
Մանկլաւիկներ՝ նեռերն իրենց կը փռնեն
Կոճղի մ'վըրայ հովառապալ կաղնիին:
Ու մերթ ընդ մերթ, աչք կը նետեն
Հոնկէ անցնող նաժիշտին:
Վահէվհեան ամրակառոյց սիւնէն վեր
Կը բարձրանայ քրմապետը խոնջ ու ծեր,
— Հազած իր պերճ հանդերձներ —
Մեղեդիի մը չափով: Ու այնտեղ՝
Գահին վրայ իր նստած
Պահ մը լոկ կը խոկայ,
Դաշխուրանի մը վրայ:
Հոն է ափորն, աստուածընտիր, ջուրովն լի
Եփրատի:
Եւ տրցակներ՝ ուռնի,
Կ'առնէ տրցակն, կը թաթաւէ զայն ջուրով
Ու կը ցողուէ, գահաւանդին հերքեւէն
Անցնող բոլոր մարդերու գլխուն վրայ

Քրմապետ

Եփրատ, դո՛ւ կ'արշաւես

Յովառակի նման վէս:

== (ջուրի սրսկում) ==

(Ծծկեր ունեցող մայրերը կ'անցնին)

Քրմապետ

Կոխկրտելով առաթուր

Մարգագետին ու բըլուր,

(Ծեր կիներ կ'անցնին)

Քրմապետ

Դու ծոցին մէջ կը լեցուին

Ջրերակներ մեր երկրին

(Աղջիկներ կ'անցնին)

Քրմապետ

Դուն ես շառափն արեւուն,

Անհունի խորն ու անհո՛ւն:

(Որբեւայրի կիները կ'անցնին)

Քրմապետ

Ու դուն կ'ըլլաս լոկ հանճար,

Գանկերու մէջ՝ կեցած թառ:

(Ծերերը կ'անցնին)

Քրմապետ

Կրօնի շուն քերական,

Անմահութեան շարական:

(Երիտասարդներն ու պարմանները կ'անցնին)

Քրմապետ

Հրաշքին բորբ, դպսու քեզ,

Կախարդիչ շողն ոսկեգէս:

(Կանամբրիները կ'անցնին)

Քրմապետ

Ու լեռնէն վար, Անահտին

Ձօնուած հորթերն կը նային՝

(Բրմուհիները կ'անցնին)

Քրմապետ

Խոր զարմացմամբ, թէ ի՞նչպէս

Ջուրերդ կ'ըլլան լոյսի պէս՝

(Բուրմերը կ'անցնին)

Քրմապետ

Եւ յանկարծուտ՝ ափիդ վրայ
Անահիտ մերկ կը խնդայ...

(Թաղաւորն եւ հետեւորդները կ'անցնին)

Քրմապետ

Կ'օրհնեմ զքեզ, ով հայեր,
Հայկեան ցեղին կորիւններ,
Վահանը ձեր անխորտակ,
Կուրծքերը ձեր կուռ շողակ,
Մեծցէ՛ք ազատ, ինքնիշխան
Ձեզմով պարծիւ Հայաստան

(Զինուորները կ'անցնին)

Քրմապետ

Ողջոյն արքայ, Սուրիդ դէմ՝
Հայաստանը կը խնդայ...

(Զինուորական քայլերդ)

Քրմապետ

Անահիտ,
Պիտի չըլլայ երբեք
Մեկնող մը բանին,
Հանգուցի մէջ՝ հանգուց
Կը հիւսես կրկին.
Անահիտ:

(Բոլոր մկրտուելիք պղտիկները Գահաւանդի ոտքը կը
քերուին մկրտուելու համար):

Արեւայական պառզամաբեր

Մահեանապետ

Քրմապետ

Հրաման թաղաւորին:
Արեւայական պառզամաբեր
Տէ՛ր եւ Արքայ:

Քրմապետ

Արքայ Հայաստանի:

Արեւայական պառզամաբեր

Արքայից արքայն:

Քրմապետ

Եւ արդարադատ,
Արեւայական պառզամաբեր

Տէրս կը փափաքի
Կնքահայ՝ ըլլալ
Բոլոր պղտիկներուն,

Քրմապետ

Մահեանից ողջոյն դուք տըւէ՛ք,
Արքային մեր,
Եւ ըսէ՛ք՝
Մենք՝ սարուկներ, ինք՝ մեր տէր:

Արեւայական պառզամաբեր

Պղտիկներուն՝
Աստիճան ասպետութեան,
Իսկ հայրերուն՝
Կենսաթոշակ հարիւր ամ:

(Ծափեր)

Քրմուհի մը, ոսկիէ սկուտեղի մը վրայ, Արքային եւ
իր հետեւորդներուն վարդեր, ու ժողովուրդին՝ շուշան կը
բաշխէ. նուիրառները, աջ ձեռքով վեբ կը բարձրացնեն
ծաղիկները եւ կ'աղօթեն: Գահաւանդէն եօթը լոյսեր կը
կը վառին միեւնոյն աշտանակէն. անոնց շողը կ'իյնայ դա-
ւապրին վրայ արիւնոտ:

Խաւմը կ'երգէ (մեղեդի)

Անահիտ, Անահիտ,
Նըման քու փառքիդ
Չըկայ երկրիս վըրայ
Երէկ եւ հիմայ:
(Խոնարհուլ)

Անբաղդատելի ես,
 Խոր ուկիէանի պէս,
 Միայն դուն ես, քեզի նման,
 Բեղմով՝ եղական

(Ծննդադրութիւն)

Դուն՝ ըրիր սրբազան,
 Զուրն՝ Եփրատական,
 Զի անոր մէջ դըրիր
 Հրաշքդ՝ եւ լոյսը իր...:

(Արքայի օթեակէն ճերմակ աղաւնի կը թռցնեն)

Պանծա՛ր ո՛վ լոյս, ինչպէ՛ս
 Աստուած մը վէս,
 Որ խղճին մէջ եղաւ՝
 Խիղճ մը անդրաւ...:

(Հազարապետի օթեակէն երկրորդ աղաւնին կը թռցնեն)

Անահիտ ու Եփրատ,
 Երկու մագաղաթ.
 Ընթեռնուլ չեն կրնար
 Մարդիկն ու հանճար...:

Գահաւանդէն ընկոյղեայ պնակիտ մը ցոյց կը տրուի
 հայկական զինանշանով ու արծիւ մը՝ որ կը թեւածէ Մա-
 սիսի ձիւներու վրայէն:

(Թագուհիի օթեակէն երրորդ աղաւնին կը թռցուի)

Խումբը (եղանակաւոր)

Անահիտ, Անահիտ:

Քրմապետ

Գաղտնիքը եօթ է,

Խումբը (եղանակաւոր)

Անահիտ, Անահիտ,

Քրմապետ

Անահիտ գլտէ:

(Մեհեանի եօթը մարմար սիւներուն տակ՝ եօթը սեղանա-
 ներ, եօթը գահերով, այդ սիւներէն ամէն մէկուն վրայ
 գրուած է հին քաղաքի մը անունը — Վան, Աշտիշատ,
 Ոստան Արմաւիր, Արտաշատ, Բաղաւան, Թիւ — եօթը
 բանաստեղծներ՝ քերթուածներ կը կարդան մարմնացնելով
 խորհուրդը այդ քաղաքներուն):

Վ.Ա.Ն.

Բանաստեղծը՝ բեւերագրութեան մը վրայ արտասուե-
 լէն: Դող ու ցնցում: Բայց՝ ըմբոստ է ու կորովի:

Կը կենաս վե՛ր, եկող, գացող դարե՛րէն,
 Մահն՝ անարգող բազմադարեան ծերունի
 Տեսնելու լոկ, Պատմութիւնն որ կ'աւաղէ
 Անյուսօրէն մագաղաթի մէջ դեղին...:

Հայկաչէնէն կուգայ ձայն՝ վըրինջին,
 Նժոյգներուն՝ որոնց ճակատը պողպատ
 Կը փշին Աստղն, ու ոտքին տակ՝ մեծ Ծովին
 Զրանուշներ հայանըէր կուտան ծափ...:

Վան քաջայաղթ: Անպարտելի կը մնաս,
 Աստծու մը պէս, ու տըւած վէրքդ է անբոյժ.
 Բեւը մեռաւ, անոր արեան մեկենաս՝
 Հայկը կերտեց, ցեղն՝ մարդկութեան անդրբոյժ:

Վանեան բերդէն, կը լսես դեռ, պերճաղիճ
 Շամիրամին կանչը տըխուր, «ո՛վ Արտյ,
 Արիւնիդ մէջ՝ Գեղդ արու, ոսկի լիճ՝
 Որուն մէջէն տրվանքս տակաւ լողայ...»

Եղար անմահ, եղար անյաղթ, զի գիտցար՝
 Պատիւն կշռել, ցորնով, կուտով անսըխալ...:

(Փառադրութեան ձիւղեր ամէն կողմէն)

ԱՇՏԻՇԱՏ

Քերթողը վահեղհեան մեհեանի մանրանկար մը
ունի իր առջեւը, սեղանին վրայ: Կրօնական խորհուրդով
ծանրաբեռնուած մարգարէի մը կեցուածք ու հնապաշտի
հպարտութիւն:

Հովտէ, հովիտ, ցուրբը հետ կ'արածին,
— Բագնետան գուռը բաց է—
Արեւն նստեր անոնց ուսին, մեղմագին
Դարերը հին կը կանչէ...:

Փարկէն եղաւ սրբութեան մէջ՝ սրբութիւն
— Արածանին կը խնդայ —
Աշտիշատի գրուած է փառքն ու անուն՝
Պնակիտի մը վրայ...:

Դո՛ւ, Աշտի՛շատ եռամեհեան հռչակով,
— Հրաշք՝ կ'աճի սեմիդ քով —
Անցեալին մէջ, եւ անցեալէն ա՛լ հեռու
Կը լսուի դեռ գովքըդ քու...:

Վահեղհեան մեհեանը պերճ, կը կանգնի.
Առնիւն վե՛ր, զերթ լուսնի,
Ուր Հերակլեայ առնապատկերն կրէտածին
Կը պսակուի իր ուժին...:

Երկրորդին մէջ՝ Ոսկիամայր Անահտայ
Արձան ոսկի կը շողայ,
Պատուանդանին տակէն ինչպէս յորդ առու
Զգաստութիւն կը հեղու:

Մինչ երրորդը, սիրոյ սենեակ վահագնի,
Արեւուն գէմն՝ իսկ արփի,
Ոտքերը ուր, Աստղիկն կ'օժէ դիւցազնի,
Շիթերովը իր արցունքի:

Աստուածակերտ քաղաքն ես դու, Աշտիշա՛տ,
Հաւատքի մը՝ հնաւանդ...:

(Կրօնական օրհներգ՝ նուագարաններով)

ՈՍՏԱՆ

Անոր առջեւ՝ լուսնի ճառագայթարձակ մը, որ ծովու
կապոյտէն կը սահի: Ծա՛նր ու պատկառազգու: Կը խոկայ,
խորունկ՝ ինչպէս երկինքն ու ծովը:

Կը դրես դո՛ւ
Աւանդավէպն ՆԱՅԻՐԻ,
Մեկանդ քու՝
Կաթնաշողը լուսնի:

Լի՛մ: Աղթամա՛ր,
Եռանդապնակ Հանճարի,
Կը թաթխես յա՛ր,
Տառը՝ Տեսիլք Քերթողի...:

Զր.Կ.՝ զեցիր
Եղնիկներու արիւնով
Գրիչդ ու գիր՝
Որ վերջացնես սիրերդով...:

Կապոյտն՝ քուկդ է.
Քուկդ է անոր Առասպել,
Բացի քեզմէ,
Ոչ ոք կրնայ զայն գրել...:

Կը դրես դու
Աւանդավէպն՝ Նայիրի,
Էհէ՛, ԴԱՐՆ ես դու
Փրցուած ծոցէն Անցեալի...:

(Քաղցր, բայց թեթեւ հպարտութիւն մը՝ սիրտէ սիրտ)

ԱՐՄԱՆԻՐ

Պարտուած թագաւորի մը գանկը իր սեղանին վրայ՝
 երկաթէ հսկայ գամերու քովիկը: Զրահներ, ոււր եւ թագ:
 Հպարտութեան եւ ըմբոստացման ալիքները՝ ճակտին վրայ:

Քաղաք փարթամ, ու քաղաք հիւսն,
 Նստեր ձիւնեղ՝ դէմն Մասիսին,
 Կը կարդաս բաղդն վրհուկի պէս
 Մեր սիրասուն հայրենիքին:

Պարիսպներէդ հնադարեան
 Արեւելքին կը հնչէ ձայն,
 Թէ մարդկային վայելքն՝ կ'աճի
 Եղէգնուտի մէջ ունայն...

Զըկա՛յ Անմահն, չըկա՞յ յաւերժն,
 Կեանքը՝ կեանքին է տարամերժ,
 Լոկ կը հսկէ մահը ճամբուն...,
 Իրրեւ անհոգ ասպետ մը պերճ...:

Աշտարակէդ երկնասլըսց
 Կը պաղատի արքան մարաց,
 Անոր ճակտին դուն գրեցիր
 Երկաթ գամով Լալիճ գէժ Լալ...:

ԱՐՏԱՇԱՏ

Մազերը ցանցախով, դէմքը՝ բիրտ ու արհամարհող՝
 այս բանաստեղծը: Զեռքին մէջ գրիչ, ու անութիւն տակ՝
 իմաստութեան մատեանը: Զիթենի մը ոստը կը համբուրէ,
 ճշմարտութիւնը արտաբերելու հաւատքով:

Ինկաւ Կարգեղո՛ւն: — Ամօթ Հոռմին,
 Մեռաւ Արտաշատ: Անէծք աշխարհին,
 Աննիբալի համար՝ հանճարը կուլայ,
 Մինչ Հայութեան դէմ, խիղճն՝ կուգայ մեղայ...:

Ո՞վ ըսաւ Ուժին: Թէ դուն արքայ ես,
 Կրնաս աւերել ինչպէս որ կամիս,
 Կոտորե՛ցէք սուրը, զի ան՝ անմահ չէ,
 Արեան մէջ, իզո՛ւր, շան պէս կը հաչէ:

Նիզակն վերջապէս, եւ նետն ու վահան,
 Մահու դործիք են, սարսուռով մահուան,
 Անոնց մէջ չկան, հրաշքն ու տեսիլք
 Ո՛չ իմաստութեան երկունքն ու գաղտնիք:

Գրիչը թարձր է, ցեւեց, աղեղեց,
 Լոյսը՝ Հոռմեց, ու բաճճ՝ արիւնէն,
 Գոցեցէք ձեր դունն, արքանե՛ր, օհէ՛
 Մեռնող ազգերուն դատաստանն բիրտ է...:

(Ապշահար ակնարներ ու դող)

ԲԱԳԱՆԱՆ

Պղնձակուռ, հեթանոսական ակութ՝ բորբ կրակով,
 մարմարի կտորներ: Կուրծքին վրայ՝ ճերմակ շուշան, կրա-
 կի անբծութիւնը խորհրդանշող:

Կը մնաս դուն, Նպատ լերան
 Մատուցարան,
 Անմրցելի եւ եղական
 Բագնաց աւան:

Կը փողփողի վանատուրի
 Մարմար բազնի,
 Դրօշն ճերմակ, զերթ աղաւնի
 Նաւասարդի:

Մեհեանիդ մէջ՝ կ'երգէ կըրակ,
 Ակութին տակ,
 Աւանդութիւնն՝ կը գիտէ Հայկ,
 Գլուխը հակ...:

Պիտի չըլլայ հուրը անբիծ՝
 Օր մ'սրբապիղծ,
 Ո՛չ ալ փառքէդ անպարագիծ
 Թեւէ թախիծ....:

(Վանատուրի օրհներդ՝ ընկերակցութեամբ նուագփ)

[Թ. 101]

Թիլ ներկայացնող քերթողը, եռանկիւնաձեւ մը ունի պղծէ, պողպատ գամով մը կը հնչեցնէ դայն երեք անգամ, և կը խոկայ, աջ ձեռքը ձակտին: Յօնքերու խտութեան ներքեւ, զոյգ ակնակապիչները՝ թուփի մը տակ պահուըտած թխամօր մը պէս:

Պատարագիչը դո՛ւն ես,
 Կընես պատարագ,
 Արամա՛ղդ...
 Խորհրդատեարդ՝ կ'ըլլամ ես,
 Բիբիդ լոյսին տակ՝
 Գերիմաստ:
 (Բրմապետը՝ սրբազան մագաղաթներ կը բանայ)
 Դուն, Տաճարն ես, ես՝ դարբի,
 Լուսնակը՝ բուրվառ,
 Արարի՛չ,
 Աստղերն՝ աղօթք, Արփը՝ դպիր
 Մասիս՝ լուսարար
 Ու մեկնիչ....:
 (Ունեկի ծուխը կը բարձրանայ դաբիրէն)
 Իմաստութեան Գիրքի դուն ես,
 Պարագրութիւնը՝ ես,
 Աստուած Հա՛յր,
 Ես՝ դող, դուն հանճար, կ'արչաւե՛ս
 Յասմնալից ինչպէս
 Երիվար....:

(Բրմուհի մը, գրիչը կը թաթխէ մեղանին մէջ,
 Ուր որ ըլլա՛ս, քեզի հետ ե՛մ,
 Քեզմէ անբաժան,
 Միաձո՛յլ,
 Քեզմով՝ ես, ինձմով՝ դուն, գիտեմ
 Կ'ապրինք յաւիտեան
 Կիրքով նոյն....:

(Բշոցի, ծնծղայի, փանդիւղի, պղնձատափի եւ դեռ ուրիշ նուագարաններու յանկարծական ու կիրքոտ ժխորը, վերջ կուտայ «Եփրատական» ժամերգութեան):

Դուրսը՝ վահանի, սուսերի շկահումը՝ անողորք ու զարհուրալից: Մտքի, մտի ու ոսկորի մրցում: Ծափեր, աղաղակներ: Սիւնեաց նոթայները, իրենց ոտքերուն թափովը, կը չափեն հեռաւորութիւնները արտերուն: Այրարատի այրուծին կը յաղթանակէ: Տարոնի զօրավարները՝ իրենց աղքիկներուն կը թնամ ռազմազաշտերը կ'երազեն: Գողթան երգիչները կ'երգեն դիւցազնութիւնը ցեղին ու Սասունի կիները՝ անոնց ծաղիկներ կը մատուցանեն պարով ու երգով....:

Գինարբուք ու բերկրանք: Հայաստանը կը քնանայ մետաքսէ բարձի մը վրայ: Դիւցազնութիւնը մտեր է վասպուրականի ու Այրարատի գինիին կաթիլին մէջ, անվախութեան ալիքով....: Արքայական արծեղօրը կը փաղփի արեւուն տակ ու կ'սպառնայ աշխարհին՝ ատելութեամբ ու յոխորտանքով....:

Ճերմակ աղաւնիները, կ'անցնին Արածանիէն անդին, հովէն քչուած ձիւնաթոյր բամպակի կծիկներու պէս: Անտառը մը եզրը՝ մոկաց հարսերը կը պարեն....: Կուրծքը բա՛ց, ծերերը Բարձր Հայքի, հէքեաթ կը պատմեն, յենած բերդի մը աւերակ պարիսպին....:

Ի բիկնաժուռ:


Անտառի մը մութ կապոյտին վրայ, կ'արիւնի արեւը՝
մորթուած հաւի մը կարմիրովը... Սարսափը կը տքայ քա-
րանձաւներուն խորը... Մահն ու գիշերը կը դաւադրեն
կրկին... Բոյները՝ լուռ են սարսուէն, ու զարհուրած
խրճիթները գիւղերուն՝ ողնի մը պէս իրենց փուշերը կը ցցեն:

Դարձեալ, մութը՝ կապար:

Կը ճնշէ լեռը քարկէ...:

Գիշեր: Քրմապետը, հողճրագի մը աղօտ լոյսին ներ-
քեւ, մտամոլոյ մագաղաթները կը կարգայ...:

==ՎԵՐՋ==



[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side]

11

[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side]

11

300

« Ազգային գրադարան



NL0116923

55785

ԳԻՆ 25 ՏՐԱԽՄԻ